Հավելված N2

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 24-ի N 245-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է բաց մրցույթի հանձնաժողովի
2019 թվականի հունվարի «25» «005» որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն

Բաց մրցույթի ծածկագիրը՝ 3-Ремонт-2019-МЭК

Պատվիրատուն՝*«Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ, որի հասցեն է Հայաստանի Հանրապետություն, 0021ք. Երևան, Ադոնցի 10Բ,* հայտարարում է բաց մրցույթ:

Բաց մրցույթում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել *Հրազդան ՀԷԿ-ի թ.1 և թ.2 հիդրոագրեգատների յուղա և օդահովացուցիչների նորոգման աշխատանքների* կատարման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն մրցույթին մասնակցելու հավասար իրավունք:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:*Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:*

Մրցութային փաթեթը հայերեն /ռուսերեն լեզվով ստանալու համար, անհրաժեշտ է 40 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հայտարարությունը հրապարակելու պահից **գրավոր** դիմել պատվիրատուին վերջինիս հասցեով՝ "Միջազգային Էներգետիկ Կորպորացիա" ՓԲԸ Նյութատեխնիկական մատակարարման և գնումների վարչություն, սենյակ 201;

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մինչև *2019 թ. մարտի 06-ի ժամը 16:00, "Միջազգային Էներգետիկ Կորպորացիա" ՓԲԸ / Հայաստանի Հանրապետություն, 0021, ք.Երևան, փող. Ադոնցի 10 Բ, հեռախոս՝ 24 50 99, ֆաքս՝ 24 51 99, e-mail՝* e.avetisyan@mek.am;

Հայտերը բացվում են Ընկերության ԿԳՄ նիստին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին հաջորդող օրը՝ *2019 թվականի մարտի 07-ին ժամը 10:00-ին:*

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն մրցույթի հրավերով սահմանված կարգով: Բողոքը ներկայացնելու համար պահանջվում է վճար՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով, որը պետք է փոխանցվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվեհամարին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝Ա.Բաբսեղյանին

Հեռախոս 24-50-99 (106)

Էլ. փոստ a.barseghyan@mek.am

Պատվիրատու "Միջազգային Էներգետիկ Կորպորացիա" ՓԲԸ

Հ Ր Ա Վ Ե Ր

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ԱՌԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՄԻԱՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹ

ՀՐԱԶԴԱՆ ՀԷԿ-ի թ.1 և թ. 2 ՀԻԴՐՈԱԳՐԵԳԱՏՆԵՐԻ ՑՈՒՂԱ և ՕԴԱՀՈՎԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ՝

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ

ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

Երեւան

2019

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ընդհանուր տեղեկություններ մրցույթի վերաբերյալ

1.1.1 Մրցույթի Կազմակերպիչ հանդիսացող Պատվիրատուն՝ «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ /«ՄԷԿ» ՓԲԸ ՀՀ, 0021, ք. Երեւան, Ադոնցի փող. 10Բ, հեռախոս՝ 24 50 99, ֆաքս՝ 24 51 99, e'mail՝ e.avetisyan@mek.am՝ մրցույթի անցկացման մասին հրապարակված Ծանուցմամբ (հրապարակվել է 2019 թ. Հունվարի "25-ին" "Ռուսհիդրո" ԲԲԸ միասնական տեղեկատվական պորտալում, բաժին «Գնումներ» www.rushydro.ru, «ՄԷԿ» ՓԲԸ կորպորատիվ ինտերնետային կայքում, բաժին «Գնումներ» www.mek.am) և ՀՀ Ֆինանսների Նախարարության պաշտոնական ինտերնետ-կայքում, բաժին «Գնումներ» www.minfin.am) հրավիրում է իրավաբանական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներ) մասնակցելու առանց նախնական որակավորման ընտրության բաց միափուլ մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ)՝ "ՄԷԿ" ՓԲԸ Հրազդան ՀԷԿ-ի թ.1 և թ.2 հիդրոագրեգատների յուղա և օդահովացուցիչների նորոգման աշխատանքների կատարմամբ՝ (այսուհետ՝ Աշխատանքներ) Պայմանագիր կնքելու իրավունքի նպատակով՝ Պատվիրատուի կարիքների համար:

1.1.2 Տեղեկությունների համար դիմել.
«ՄԷԿ» ՓԲԸ ագլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր ճարտարագետ՝ Գ.Ա. Բաղդասարյան, հեռախոս՝ 24 50 99, ֆաքս՝ 24 51 99:

1.1.3. Մրցույթն անց է կացվում «ՄԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 2019թ. հունվարի 10-ի թիվ 05

հրամանի հիման վրա:

1.1.4. Կատարվելիք աշխատանքներին ներկայացվող պահանջները շարադրված են բաժին 2-ում (այստեղ և այսուհետ հղումները վերաբերում են սույն Մրցութային փաստաթղթերին): Պայմանագրի նախագիծը, որը կկնքվի Մրցույթի արդյունքներով, ներկայացված է բաժին 3-ում: Մրցույթի անցկացման և դրանում մասնակցության կարգը, ինչպես նաև Մրցութային հայտերի նախապատրաստման հրահանգները բերված են 4 և 5 բաժիններում:

1.2. Փաստաթղթերի իրավական կարգավիճակը

1.2.1 1.1.1. կետին համապատասխան հրատարակված (պաշտոնական է համարվում «ՄԷԿ» ՓԲԸ սայթում հրատարակված տարբերակը)՝ Մրցույթի անցկացման մասին Ծանուցումը՝ իր անբաժանելի հավելվածը հանդիսացող սույն Մրցութային փաստաթղթերի հետ միասին հանդիսանում են Պատվիրատուի օֆերտա և մրցույթի Մասնակիցների կողմից պետք է դիտակվի այդպիսին՝ Մրցույթի անցկացման համար սահմանված ժամկետում:

1.2.2. Մրցույթի Մասնակցի մրցութային հայտն ունի օֆերտայի իրավական կարգավիճակ և կդիտարկվի այդպիսին Պատվիրատուի կողմից:

1.2.3. Պատվիրատուի և մրցույթի Հաղթողի կողմից ստորագրված՝ Մրցույթի արդյունքների մասին արձանագրությունն ունի պայմանագրի ուժ, որով սահմանվում է կողմերի պարտականությունը՝ կնքել Պայմանագիր մրցույթի անցկացման մասին Ծանուցմամբ, Մրցութային փաստաթղթերով և մրցույթը Հաղթողի Մրցութային հայտով սահմանված պայմաններով՝ հաշվի առնելով սույն Մրցութային փաստաթղթերի շրջանակներում սահմանված նախապայմանագրային բանակցությունների անցկացման հնարավորությունը:

1.2.4. Մրցույթի արդյունքներով կնքված Պայմանագիրն ամրագրում է կողմերի միջև ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները:

1.2.5. Մրցույթի Հաղթողի հետ կնքվող պայմանագրի պայմանները սահմանելիս օգտագործվում են հետևյալ փաստաթղթերը՝ պահպանելով նշված հիերարխիան (դրանց հակասության դեպքում)

ա) Պատվիրատուի և մրցույթի Հաղթողի միջև նախապայմանագրային բանակցությունների արձանագրությունները (այն պայմանների վերաբերյալ, որոնք ոչ սույն Մրցութային փաստաթղթերում, ոչ մրցույթը Հաղթողի Մրցութային հայտում չեն հիշատակվել)

բ) Մրցույթի արդյունքների մասին արձանագրություն,

գ) Մրցույթի անցկացման մասին Ծանուցում և սույն Մրցութային փաստաթղթերը՝ բոլոր լրացումներով և պարզաբանումներով,

դ) Մրցույթը Հաղթողի մրցութային հայտը՝ բոլոր լրացումներով և պարզաբանումներով,

1.2.6. Պատվիրատուի և Մրցույթի Մասնակիցների այլ փաստաթղթեր տվյալ Մրցույթի կապակցությամբ չեն սահմանում կողմերի իրավունքերն ու պարտականությունները :

1.2.7. Այն ամենում ինչը կարգավորված չէ Մրցույթի անցկացման մասին Ծանուցմամբ և սույն Մրցութային փաստաթղթերով, կողմերը ղեկավարվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով:

1.2.8. Եթե Մրցույթի արդյունքներով կնքվող Պայմանագրի կողմերի նկատմամբ գործում են նաև սահմանված կարգով հրապարակված և գրանցված բոլոր այլ հատուկ նորմատիվ իրավական ակտերը, սույն մրցութային փաստաթղթերը (և Պայմանագրի նախագիծը, որպես դրա մաս) և Հաղթողի մրցութային Հայտը կհամարվեն առաջնային՝ նշված փաստաթղթերի դիսպոզիտիվ նորմերի նկատմամբ:

1.3 Բողոքարկում

1.3.1. Մինչև պայմանագրի կնքումը տարաձայնությունները ուղարկվում են Կենտրոնական Գնման Մարմին: ԿԳՄ պատասխանատու քարտուղարը՝ տարաձայնությունների քննարկման դիմումն ստանալու դեպքում, անհապաղ այդ մասին տեղեկացնում է գնումն անցկացնող հանձնաժողովի նախագահին և Պատվիրատուի Տնօրենների խորհրդին: ԿԳՄ-ում տարաձայնությունների քննարկման ժամանակահատվածում կասեցվում է գնման գործըն-

թացը՝ մինչև որոշման ընդունումը, եթե դրա համար չկան ակնհայտ իրավաբանական կամ տնտեսական բնույթի խոչընդոտներ :

1.3.2. Եթե տարաձայնությունները չեն լուծվում այն ներկայացնող մասնակցի և գնում իրականացնող անձանց փոխադարձ համաձայնությամբ, Պատվիրատուի ԿԳՄ նման տարաձայնություններ ստանալու պահից 10 օրյա ժամկետում կայացնում է գրավոր որոշում, որը պետք է բովանդակի՝

ա) որոշման ընդունման շարժառիթների հիմնավորումը,

բ) շարադրված պահանջների բավարարմանն ուղղված միջոցները՝ տարաձայնությունների մասնակի կամ ամբողջական լուծման դեպքում

1.3.3. ԿԳՄ իրավասու է ընդունել հետևյալ որոշումներից մեկը կամ մի քանիսը

ա) մրցույթների վերաբերյալ տարաձայնությունների դեպքում մրցութային հանձնաժողովի՝ ոչ իրավաչափ գործողություններ կատարած, ապօրինի ընթացակարգեր կիրառած կամ ապօրինի որոշում ընդունած անդամներին պարտավորեցնել իրականացնել գործողություններ, կիրառել ընթացակարգեր կամ ընդունել որոշում՝ սույն Կանոնակարգին համապատասխան,

բ) ավարտված գնումների վերաբերյալ տարաձայնությունների դեպքում ղեկավարությանն առաջարկել ընդունել որոշում՝ ապօրինի գործողության, որոշման կամ ապօրինի ընթացակարգի կիրառման արդյունքում մասնակցի կրած վնասները փոխհատուցելու մասին: Եթե պայմանագրում ընգրկված է վերապահում՝ պայմանագրի կնքման ընթացակարգի խախտումների հայտնաբերման դեպքում պայմանագրի միակողմանի լուծման մասին, ԿԳՄ իրավասու է առաջարկել ղեկավարությանը պայմանագրի կնքումից հետո ընդունել որոշում պայմանագրի միակողմանի լուծման մասին,

գ) մասնակցի դիմումը չհիմնավորված ճանաչել

1.3.4. Մրցույթի անցկացման կապակցությամբ առաջացող բոլոր վեճերն ու տարաձայնությունները, այդ թվում՝ Պատվիրատուի և Մասնակիցների կողմից իրենց պարտավորությունների կատարմանը վերաբերող, որոնք չեն կարգավորվել Պատվիրատուի ԿԳՄ-ին բողոքարկման ճանապարհով՝ դատական կարգով՝ նրա իրավական կարգավիճակը և վեճերի լուծման կարգը սահմանող, հայցադիմում ներկայացնելու պահին գործող փաստաթղթերին համապատասխան:

1.3.5. Վերոնշյալը չի սահմանափակում կողմերի իրավունքները դիմելու դատարան՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

1.3.6. Սույն Մրցույթի անցկացման հետ կապված ցանկացած վեճի և տարաձայնության քննարկման դեպքում՝ կողմերը հաշվի են առնում, որ ենթակա է կիրարկման Հայաստանի Հանրապետության նյութական և դատավարական իրավունքը:

1.4. Այլ դրույթներ

1.4.1. Մասնակիցը ինքնուրույն է կրում Մրցութային հայտի նախապատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը, իսկ Պատվիրատուն այդ ծախսերի կապակցությամբ պատասխանատու չէ և չունի պարտավորություններ՝ անկախ Մրցույթի ընթացքից և արդյունքներից, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ ուղղակի նախատեսված դեպքերի:

1.4.2. Պատվիրատուն ապահովում է Մրցույթի Մասնակիցներից ստացված բոլոր, այդ թվում՝ Մրցութային հայտերում բովանդակվող տեղեկությունների, խելամիտ գաղտնիությունը: Այդ տեղեկությունների տրամադրումը մրցույթի այլ Մասնակիցներին կամ երրորդ անձանց հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ կամ սույն Մրցութային փաստաթղթերով ուղղակի նախատեսված դեպքերում:

1.4.3. Պատվիրատուն իրավասու է մերժել Մրցութային հայտը, եթե նա բացահայտի, որ մրցույթի Մասնակիցը Պատվիրատուի աշխատակցին ուղղակի կամ անուղղակի տվել է, համաձայնվել է տալ կամ առաջարկել է ցանկացած տեսքով պարգևատրում, այն է՝ աշխատանք, ծառայություն, որևէ արժեքավոր իր որպես խթան, ինչը կարող է ազդեցություն ունենալ մրցույթի Հաղթող ճանաչելու՝ Մրցութային հանձնաժողովի որոշման ընդունման վրա:

1.4.4.Պատվիրատուն իրավասու է մերժել Մրցույթի այն Մասնակիցների Մրցութային հայտերը, որոնք կնքել են որևէ համաձայնություն՝ մրցույթի Հաղթողի ընտրության վրա ազդելու նպատակով:

1.4.5.Մրցույթ անցկացնելու մասին Ծանուցմանը համապատասխան Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել մրցույթ անցկացնելուց ոչ ուշ քան մրցույթի արդյունքների ամփոփումից 5 (հինգ) օր առաջ, չկրելով և ոչ մի պատասխանատվություն մրցույթի Մասնակիցների կամ երրորդ անձանց առջև, որոնց նման գործողությունը կարող է վնաս պատճառել: Պատվիրատուն գրավոր ձևով անհապաղ ծանուցում է Մրցույթի բոլոր Մասնակիցներին մրցույթի անցկացումից հրաժարվելու մասին:

2. Աշխատանքների կատարման տեխնիկական առաջադրանք

2.1 Ընդհանուր պահանջներ

2.1.1. Անհրաժեշտ թույլտվությունների և փաստաթղթերի ձևակերպմանը ներկայացվող պահանջները բերված են 4-րդ և 5-րդ բաժիններում:

2.2. Աշխատանքների կատարմանը ներկայացվող պահանջներ

2.2.1. ա) Կատարվող աշխատանքների ծավալները ներկայացված են սույն Մրցութային փաստաթղթերի Հավելված 1-ում:

բ) Աշխատանքների կատարման ժամկետներին ներկայացվող պահանջներ՝ նշում է մրցույթի Մասնակիցը:

3. Պայմանագրի նախագիծ

«Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ, որն այսուհետ կանվանվի «Պատվիրատու», ի դեմս գլխավոր տնօրեն պրն. Ռ.Վ.Զոհրաբյանցի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____
, որն այսուհետ կանվանվի «Կապալառու», ի դեմս _____ որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից, հայտարարված բաց մրցույթի արդյունքներով, մրցույթի արդյունքների մասին «__» թվականի №_____ արձանագրության հիման վրա, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

3.1. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններ

3.1.1. Սույն պայմանագրի շրջանակներում օգտագործվում են հետևյալ հասկացությունները և դրանց սահմանումները.

3.1.1.1.«Պատվիրատուի ներկայացուցիչ» նշանակում է Պատվիրատուի կողմից լիազորված ցանկացած անձ, որի պահանջները և ցուցումները Կապալառուի համար հանդիսանում են պարտադիր:

3.1.1.2. «Օբյեկտ» նշանակում է Հրազդան ՀԷԿ:

3.1.1.3. «Պայմանագիր» նշանակում է Պատվիրատուի և Կապալառուի միջև սույն պայմանագիրը՝ ներառյալ բոլոր անբաժանելի Հավելվածները:

3.1.1.4. «Օր» նշանակում է օրացուցային օր:

3.1.1.5. «Ամիս» նշանակում է Գրիգորյան օրացույցի օրացուցային ամիս:

3.1.1.6. «Աշխատանքներ» նշանակում է՝

“ՄԷԿ” ՓԲԸ Հրազդան ՀԷԿ-ի թ.1 և թ.2 հիդրոագրեգատների յուղա և օդահովացուցիչների նորոգման աշխատանքների կատարմամբ;

ցանկացած այլ աշխատանքներ և ծառայություններ, որոնք անհրաժեշտ են սույն Պայմանագիրը իրականացնելու համար:

3.2. Պայմանագրի առարկա

3.2.1. Պատվիրատուն հանձնում է, իսկ Կապալառուն ստանձնում է իրականացնել Օբյեկտում “ՄԷԿ” ՓԲԸ Հրազդան ՀԷԿ-ի թ.1 և թ.2 հիդրոագրեգատների յուղա և օդահովացուցիչների նորոգման աշխատանքների կատարմամբ: Աշխատանքների Ծավալները և Արժեքները սահ-

մանվում են սույն Պայմանագրի թիվ 1 Հավելվածով:

3.2.2. Պատվիրատուն պարտավորվում է ընդունել և վճարել կատարված աշխատանքների համար՝ սույն Պայմանագրի պայմաններով:

3.3. Աշխատանքների արժեքն ըստ Պայմանագրի

3.3.1. Սույն Պայմանագրի գինն առանց ԱԱՀ, կազմում է՝ _____դրամ, բացի այդ՝ ԱԱՀ (20%)_____դրամ, ընդամենը ՝ _____ դրամ:

3.4. Աշխատանքների կատարման ժամկետները

3.4.1. Աշխատանքների սկիզբը՝ սույն Պայմանագրի ստորագրման ամսաթիվն է (*ծանուցում՝* Պատվիրատուն կվորոշի և կհայտնի Աշխատանքների սկսման ճշտված ամսաթիվը՝ կախված էներգահամակարգի Օպերատորի հետ համաձայնեցված Օբյեկտի աշխատանքային ռեժիմից):

3.4.2. Աշխատանքներն ավարտելու ժամկետը՝ աշխատանքների սկզբի ամսաթվից՝ x ամիս:

3.5. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.5.1.Կապալառուի պարտականությունները

3.5.1.1. Աշխատանքներն իրականացնել սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան:

3.5.1.2. Երաշխավորել կատարված աշխատանքների որակը:

3.5.1.3. Պատվիրատուին ժամանակին ներկայացնել իր անձնակազմի և ավտոմեքենաների ցանկը՝ Օբյեկտի տարածքներ անցնելու (ուղանցելու) անցաթղթերի ձևակերպման համար

3.5.1.4. Երրորդ անձանց ոչ ամբողջությամբ ոչ էլ մասնակիորեն չփոխանցել սույն Պայմանագրով իր պարտավորությունները՝ առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության և բոլոր դեպքերում պատասխանատվություն կրել Պատվիրատուի առջև այդ անձանց կատարած աշխատանքի արդյունքի համար:

3.5.1.5. Ամբողջ ծավալով կատարել Պայմանագրի այլ բաժիններում նախատեսված իր պարտականությունները:

3.5.2 Պատվիրատուի պարտականությունները

3.5.2.1.Իրականացնել կատարված աշխատանքների ընդունումը և դրանց վճարումը սույն Պայմանագրով նախատեսված կարգով:

3.5.2.2.Կապալառուին տրամադրել Կապալառուի նյութերի և սարքավորումների պահեստավորման համար տարածքներ:

3.5.2.3. Ապահովել Կապալառուի անձնակազմի անխոչընդոտ մուտքը Օբյեկտ՝ ըստ կանխավ տրամադրված ցուցակի, և մեքենաների մուտքը օբյեկտի տարածք՝ ըստ Կապալառուի հայտերի:

3.5.2.4. Պայմանագրի այլ բաժիններով նախատեսված իր բոլոր պարտականություններն իրականացնել ամբողջ ծավալով:

3.5.3. Կողմերի այլ իրավունքներն ու պարտականությունները

3.5.3.1. Կողմերի այլ իրավունքներն ու պարտականությունները բխում են սույն Պայմանագրի պայմաններից և Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունից:

3.6. Վճարումների կարգը և պայմանները

3.6.1. Կանխավճար նախատեսված չէ:

3.6.2 Կատարված աշխատանքների համար վճարումներն իրականացվում են ամեն ամիս՝ ամբողջությամբ ավարտված կոնստրուկտիվ տարրերի և աշխատանքների տեսակների համար: Վճարման պայման է հանդիսանում Կապալառուի կողմից Պատվիրատուին հետևյալի տրամադրումը՝

ա) կատարված աշխատանքների հանձման-ընդունման ակտ՝ ստորագրված Պատվիրատուի Ներկայացուցչի և Կապալառուի կողմից,

գ) վճարման հաշիվ:

3.6.3 3.6.2. կետում նախատեսված պայմաններին հետևելիս Պատվիրատուն 10 օրվա ընթացքում ընդունում է Կապալառուի հաշիվը և ուղարկում վճարման հանձնարարական Պատվիրատուի բանկ՝ վճարումն իրականացնելու համար:

3.7. Աշխատանքների իրականացում

3.7.1. Պատվիրատուի ներկայացուցիչը իրականացնում է տեխնիկական հսկողություն և վերահսկողություն՝ կատարվող աշխատանքների իրականացման և որակի նկատմամբ, իրականացնում է կատարված աշխատանքների ընդունումը. նա իրավունք ունի փոփոխություններ մտցնել կատարվող աշխատանքների ծավալի և բնույթի և մեջ:

3.7.2. Կապալառուն պարտավոր է եռօրյա ժամկետում Պատվիրատուի Ներկայացուցչի մատնանշած թերությունների վերացմանն ուղղված միջոցներ ձեռնարկել:

3.7.3. Այն դեպքում, եթե աշխատանքների կատարման ցանկացած փուլում կհայտնաբերվեն անորակ կատարված աշխատանքներ, Պատվիրատուի Ներկայացուցիչը կազմում է ակտ, իսկ Կապալառուն պարտավոր է իր ուժերով և առանց Պայմանագրի գնի ավելացման, սեղմ ժամկետներում վերափոխել այդ աշխատանքները՝ դրանց պատշաճ որակի ապահովման և Պատվիրատուին հանձնելու համար:

3.8. Կապալառուի երաշխիքները և երաշխիքային ժամկետ

3.8.1 Երաշխիքային ժամկետը կազմում է x ամիս Պատվիրատուի կողմից «Աշխատանքների հանձման-ընդունման Ակտը» ստորագրելու ամսաթվից:

3.8.2 Կապալառուն երաշխավորում է՝

ա) օգտագործվող նյութերի, սարքերի և սարքավորումների պատշաճ որակը,

բ) բոլոր աշխատանքների կատարման որակը,

գ) Օբյեկտի շահագործման ժամանակ բոլոր ճարտարագիտական համակարգերի և սարքավորման անխափան գործելը

դ) երաշխիքային ժամկետում հայտնաբերված թերությունների և դեֆեկտների վերացում

3.8.3 Պատվիրատուն պարտավոր է գրավոր ձևով տեղեկացնել Կապալառուին՝ երաշխիքի հետ կապված բոլոր պահանջների մասին:

3.8.4. Նման ծանուցումը ստանալուց հետո Կապալառուն պարտավոր է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Պատվիրատուին բացահայտված դեֆեկտների վերացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու մասին: Կապալառուն Պատվիրատուի հետ համաձայնեցված հնարավորինս կարճ ժամկետներում իրականացնում է վերանորոգումը՝ սեփական ուժերով և իր հաշվին:

3.8.5. Բացահայտված թերությունները Կապալառուի կողմից ողջամիտ ժամկետներում (Պատվիրատուի սահմանած՝ կախված դեֆեկտի տեսակից) վերացնելուց խուսափելու դեպքում Պատվիրատուն իրավասու է ինքնուրույն ձեռնարկել դրանց վերացմանն ուղղված միջոցներ: Հետագայում Պատվիրատուն, առանց իր այլ իրավունքները վնասելու, իրավասու է Կապալառուի վճարմանը ներկայացնել կատարված աշխատանքների արժեքը, որը հավասար է դեֆեկտների վերացման համար իրականացված ծախսերին:

3.9. Անհաղթահարելի ուժ

3.9.1. Կողմերն ազատվում են սույն Պայմանագրով իրենց պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակի չկատարելու համար պատասխանատվությունից, եթե դրանց չկատարումը հանդիսանում է անհաղթահարելի ուժի հանգամանքների հետևանք:

3.9.2. Անհաղթահարելի ուժի հանգամանքների ներքո հասկացվում են այնպիսի հանգամանքներ, որոնք ծագել են սույն Պայմանագրի կնքումից հետո՝ Կողմերին ոչ ենթակա անխուսափելի և չնախատեսված իրադարձությունների արդյունքում, ներառյալ, բայց չսահմանափակվելով, հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ, այլ տարերային աղետներ, ահաբեկչական ակտ, հաստատված համապատասխան լիազոր մարմինների կողմից՝ պայմանով, որ այս հանգամանքները ազդեցություն են ունենում սույն Պայմանագրի պարտավորությունների կատարման վրա: Ընդ որում, մաքսային մարմինների գործողությունները չեն կարող դասվել որպես անհաղթահարելի ուժ:

3.9.3. Կողմը, ում մոտ ի հայտ է եկել անհաղթահարելի ուժ, պարտավոր է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել մյուս Կողմին կատարվածի և դրա պատճառների մասին:

3.10. Վեճերի կարգավորում և արբիտրաժ

3.10.1. Սույն Պայմանագրի կատարման հետ կապված բոլոր վեճերը և տարաձայնությունները պետք է լուծվեն բողոքարկման կարգով: Այդ կարգի իրականացման համար շահագրգիռ Կողմը պետք է պահանջով դիմի մյուս Կողմին: Բողոքարկման կարգի կիրառմամբ չկարգավորված բոլոր վեճերը լուծվում են դատական կարգով:

3.10.2. Սույն Պայմանագրով չնախատեսված մնացած բոլոր դեպքերում Կողմերը ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ Կողմերի միջև տվյալ տեսակի իրավահարաբերությունները կարգավորող այլ նորմերով:

3.11. Գաղտնիություն

3.11.1. Կողմերը ստանձնում են սույն Պայմանագրի հետ կապված մի Կողմից մյուս Կողմին ուղղակի կամ միջնորդավորված կերպով տրամադրված ցանկացած տեղեկատվության և փաստաթղթերի գաղտնիության ռեժիմի փոխադարձ պահպանության պարտավորություններ՝ անկախ նրանից, թե երբ է այդպիսի տեղեկատվությունը տրամադրվել՝ մինչև սույն Պայմանագրի գործողության ժամկետի լրանալը, դրա ընթացքում, թե՝ ավարտին:

3.11.2. Գաղտնիության ռեժիմի պահպանման պարտավորությունը չի տարածվում հանրամատչելի տեղեկատվության, ինչպես նաև այն տեղեկատվության վրա, որը հայտնի կդառնա ոչ սույն Պայմանագրի Կողմի մեղքով:

3.12. Կողմերի պատասխանատվությունը

3.12.1. Կողմերը Պայմանագրով կրում են գույքային և այլ պատասխանատվություն իրենց պարտավորությունների համար՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և նորմատիվ ակտերին համապատասխան:

3.12.2. Կողմերից և ոչ մեկը չի կրում և ոչ մի պատասխանատվություն մյուս կողմի պարտավորությունների, երրորդ անձանց հետ՝ նրա պայմանագրերի և գործարքների համար:

3.12.3. Իր մեղքով աշխատանքները ժամանակին չավարտելու դեպքում Կապալառուն Պատվիրատուին է վճարում տույժ՝ Պայմանագրի աշխատանքների արժեքի 0.1% չափով՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար, բայց ոչ ավել քան Պայմանագրի գնի 5 %-ը :

3.12.4. Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքների հաշիվների ակցեպտի ուշացման դեպքում, նա Կապալառուին է վճարում վճարման ենթակա աշխատանքների արժեքի 0.1%-ի չափով տույժ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար, բայց ոչ ավել, քան Պայմանագրի գնի 5%:

3.13. Պայմանագրի լուծում

3.13.1. Սույն Պայմանագիրը կարող է լուծվել Կողմերի համաձայնությամբ:

3.13.2. Պատվիրատուն իրավասու է սույն պայմանագիրը միակողմանի լուծել հետևյալ դեպքերում՝ Կապալառուին ուղարկելով պարտավորությունները չկատարելու մասին գրավոր ծանուցում

ա) եթե Կապալառուն էապես չի կատարի սույն Պայմանագրի պարտավորությունները, ինչը Պատվիրատուի համար կհանգեցնի սույն Պայմանագրի հետագա իրականացման աննպատակահարմարությանը:

բ) եթե կպարզվի, որ մրցույթի պայմաններին իր համապատասխանության մասին Կապալառուն կեղծ տեղեկություններ է ներկայացրել,

գ) սույն Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ուղղակի նախատեսված այլ դեպքերում:

3.13.3. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է լուծել Պայմանագիրը դրա տնտեսական աննպատակահարմարության պատճառով՝ ուղարկելով Կապալառուին համապատասխան գրավոր ծանուցում: Ծանուցման մեջ պետք է նշվի, թե ինչու է այդ լուծումը նպատաահարմար Պատվիրատուի համար, Կապալառուի չեղյալ համարված պայմանագրային պարտավորությունների ծավալը և պայմանագրի լուծումն ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

3.13.4. Կողմերը պետք է միմյանց վճարեն սույն Պայմանագրի լուծման հետ կապված հիմնավորված ծախսերը՝ պայմանով, որ Կապալառուն ձեռնարկում է այդ ծախսերը նվազեցնելու համար բոլոր ընդունելի միջոցները:

3.13.5. Կապալառուն իրավասու է միակողմանի լուծել սույն Պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ուղղակի նախատեսված դեպքերում:

3.14. Այլ պայմաններ

3.14.1. Սույն Պայմանագրում նշված բոլոր Հավելվածները հանդիսանում են դրա անբաժանելի մասը:

3.14.2. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն և ռուսերեն լեզուներով: Սույն Պայմանագրին վերաբերող ամբողջ նամակագրությունը և այլ փաստաթղթերը, որոնք Կողմերը փոխանակում են, իրականացվում է հայերեն լեզվով:

3.14.3. Սույն Պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից, յուրաքանչյուր Կողմին՝ մեկական օրինակ:

3.14.4. Եթե սույն Պայմանագրի առանձին դրույթներ անվավեր կճանաչվեն կամ կկորցնեն իրենց ուժը, ապա մնացած բոլոր դրույթները կշարունակեն գործել:

3.15. Սույն Պայմանագրին կից հավելվածների ցանկ

3.15.1. Հետևյալ հավելվածները հանդիսանում նե սույն Պայմանագրի անբաժանելի մասը

Հավելված թիվ 1 « Աշխատանքների Ծավալները և Արժեքները» (ձևավորվում է մրցույթի արդյունքներով՝ մրցույթի Հաղթողի մրցութային հայտի հիման վրա)

3.16. Կողմերի հասցեները և վավերապայմանները, Կողմերի ստորագրությունները

(Կողմերի հասցեները և վավերապայմանները հստակեցվում են Մրցույթի Հաղթողի հետ Պայմանագիրը ստորագրելիս):

4. Մրցույթի անցկացման կարգը: Մրցույթի հայտերի նախապատրաստման հրահանգներ

4.1. Մրցույթի անցկացման ընդհանուր կարգը

4.1.1. Մրցույթն անցկացվում է հետևյալ կարգով

ա) Մրցույթի անցկացման մասին Ծանուցման հրապարակում (4.2 ենթաբաժին),

բ) Մրցութային փաստաթղթերի տրամադրում կապալառուներին (4.3 ենթաբաժին),

գ) Մրցույթի Մասնակիցների կողմից իրենց Մրցութային հայտերի նախապատրաստում, Պատվիրատուի կողմից Մրցութային փաստաթղթերի պարզաբանում, եթե անհրաժեշտ է (4.4 ենթաբաժին),

դ) Մրցութային հայտերի ներկայացում և դրանց ընդունում (4.6. ենթաբաժին)

ե) Մրցութային հայտերով ծրարների բացում (4.7. ենթաբաժին),

զ) Մրցութային հայտերի գնահատում (4.8. ենթաբաժին),

է) Ենթասակարկության իրականացում՝ անհրաժեշտության դեպքում (ենթաբաժին 4.9);

ը) Մրցույթի Հաղթողի որոշում (4.10. ենթաբաժին),

թ) Մրցույթի արդյունքների մասին Արձանագրության ստորագրում (4.11. ենթաբաժին),

ժ) Պայմանագրի ստորագրում (4.12. ենթաբաժին),

ի) Մրցույթի արդյունքների մասին մրցույթի Մասնակիցներին ծանուցում (4.13. ենթաբաժին):

4.2. Մրցույթ անցկացնելու մասին Ծանուցման հրապարակում

4.2.1. Մրցույթ անցկացնելու մասին Ծանուցումը հրապարակվել է 1.2.1. կետում նշված կարգով:

4.2.2. Այլ հրապարակումները չեն հանդիսանում պաշտոնական և Պատվիրատուի համար որևէ հետևանքներ չեն առաջացնում:

4.3. Մրցութային փաստաթղթերի տրամադրում Մասնակիցներին

4.3.1. Մասնակիցները կարող են ստանալ Մրցութային փաստաթղթերը՝ գրավոր դիմելով Պատվիրատուին:

4.3.2. Պատվիրատուն պատասխանատու է մրցույթ անցկացնելու մասին Ծանուցման և Մրցութային փաստաթղթերի պայմանների կատարման համար միայն այն Մասնակիցների առջև, ովքեր Մրցութային փաստաթղթերը ստացել են 4.3.1 կետում նշված կարգով:

4.4. Մրցութային հայտերի նախապատրաստում

4.4.1. Մրցութային հայտին ներկայացվող ընդհանուր պահանջներ

4.4.1.1. Մրցույթի մասնակիցը պետք է նախապատրաստի մրցութային հայտը, որը ներառում է.

ա) Օֆերտայի ներկայացման մասին նամակ հավելվածներով՝ սույն Մրցութային փաստաթղթերում բերված ձևերին և հրահանգներին համապատասխան (բաժին 5),

բ) փաստաթղթեր, որոնք հաստատում են մրցույթի Մասնակցի համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթերի պահանջներին (4.5 ենթաբաժին):

4.4.1.2. Մրցույթի Մասնակիցն իրավունք ունի ներկայացնել միայն մեկ Մրցութային հայտ: Այս պահանջի խախտման դեպքում մրցույթի այսպիսի Մասնակցի բոլոր Մրցութային հայտերը մերժվում են առանց ըստ էության քննվելու:

4.4.1.3. Մրցութային հայտում ներառվող յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ստորագրվի այն անձի կողմից, ով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրավունք ունի գործել մրցույթի Մասնակցի անունից առանց լիազորագրի կամ նրա կողմից պատշաճ կերպով լիազորված անձը՝ լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ լիազորված անձ) հավատարմագրի հիման վրա: Վերջինիս դեպքում լիազորագրի բնօրինակը կցվում է Մրցութային հայտին:

4.4.1.4. Մրցութային հայտում ներառվող յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ամրակցվի մրցույթի Մասնակցի կնիքով:

4.4.1.5. 4.4.1.3 և 4.4.1.4 կետերի պահանջները չեն տարածվում փաստաթղթերի՝ նոտարապես վավերացված պատճենների կամ տպագրական եղանակով կազմված փաստաթղթերի վրա:

4.4.1.6. Եթե ներկայացվում են տեղեկատվության լրացուցիչ կրիչները (սկավառակներ, CD-R, CD-RW, գրքույկներ, գրքեր), ապա դրանք, եթե դա հնարավոր է, պետք է լինեն համապատասխան ձևով նշագրված (օրինակ պիտակների օգնությամբ):

4.4.1.7. Դրանից հետո պետք է կատարվի Մրցութային հայտի անխտիր բոլոր էջերի համարակալում:

4.4.1.8. Մրցութային հայտում ներառվող փաստաթղթերը պետք է ամրակցվեն կամ փաթեթավորվեն այնպես, որ բացառվի տեղեկատվական ծրարների և էջերի պատահաբար թափվելը կամ խառնվելը: Եթե Մրցութային հայտը բաղկացած է մի քանի հատորից, խորհուրդ է տրվում, յուրաքանչյուր հատոր կարել՝ կցելով դրանում ներառված փաստաթղթերի ցանկը: Յուրաքանչյուր այսպիսի հատոր պետք է ունենա էջերի միջանկյալ համարակալում:

4.4.1.9. Մրցույթի Մասնակիցը պետք է նախապատրաստի և Պատվիրատուին տրամադրի Մրցութային հայտի 1 բնօրինակ և 1 պատճեն թղթե կրիչով, ինչպես նաև հայտի 1 էլեկտրոնային կրկնօրինակ (ցանկալի է): Մրցութային հայտի պատճենները նախապատրաստվում են Մրցութային հայտում ներառված յուրաքանչյուր փաստաթղթի բնօրինակի պատճենահանման եղանակով՝ դրանց ստորագրումից և կնիքով վավերացումից, ինչպես նաև էջերի միջանկյալ համարակալումից հետո,, բայց կարելուց առաջ:

4.4.1.10. Մրցութային հայտի տեքստում և ոչ մի ուղղում ուժ չունի, բացառությամբ այն դեպքերի, երբ այս ուղղումները հաստատված «ուղղմանը հավատալ» ձեռագիր մակագրությամբ և լիազորված անձի ձեռագիր ստորագրությամբ՝ տեղակայված յուրաքանչյուր ուղղման կողքին:

4.4.2. Մրցութային հայտի գործողության ժամկետին ներկայացվող պահանջներ վերաբերյալ

4.4.2.1. Մրցութային հայտը վավեր է այն ժամկետի սահմաններում, որը նշված է օֆերտայի ներկայացման մասին՝ մրցույթի Մասնակցի նամակում (5.1. ենթաբաժին): Ամեն դեպքում, այդ ժամկետը չպետք է պակաս լինի 30 օրացուցային օրից, հաշված՝ մրցույթին ներկայացված Մրցութային հայտերի ծրարների բացման ընթացակարգի անցկացման օրվան հաջորդող օրվանից (4.7.1. կետ):

4.4.2.2. Գործողության առավել կարճ ժամկետի նշումը կարող է Մրցութային հայտի մերժման հիմք հանդիսանալ:

4.4.3. Մրցութային հայտի լեզվին ներկայացվող պահանջներ

4.4.3.1. Մրցութային հայտում ներառվող բոլոր փաստաթղթերը պետք է նախապատրաստվեն հայերեն/և/կամ ռուսերեն լեզվով:

4.4.3.2. Փաստաթղթերը, որոնց բնօրինակները մրցույթի Մասնակցին տրվել են երրորդ անձանց կողմից այլ լեզվով կարող են ներկայացվել բնօրինակի լեզվով, պայմանով, որ դրանց կցված են այդ փաստաթղթերի հայերեն/ռուսերեն թարգմանությունները, (հատուկ վերապահված դեպքերում՝ ապոստիլացված): Փաստաթղթի հայերեն թարգմանության և այլ լեզվով փաստաթղթի բնօրինակի միջև անհամապատասխանության բացահայտման դեպքում Պատվիրատուն որոշումն ընդունելու է թանգմանության հիման վրա:

4.4.4. Մրցութային հայտի արժույթին ներկայացվող պահանջներ

4.4.4.1. Մրցութային հայտում ներառվող փաստաթղթերի դրամական միջոցների բոլոր գումարները պետք է արտահայտվեն հայկական դրամով:

4.4.4.2. Փաստաթղթերը, որոնց բնօրինակները՝ դրամական միջոցների գումարներն այլ արժույթով արտահայտված, տրվել են մրցույթի Մասնակցին երրորդ անձանց կողմից, կարող են ներկայացվել բնօրինակի արժույթով պայմանով, որ այդ փաստաթղթերին կցված կլինեն մեկնաբանություններ՝ տնյալ գումարները ՀՀ դրամին փոխակերպմամբ, ելնելով արժույթի՝ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած պաշտոնական փոխարժեքից՝ նշելով այդպիսի փախարժեքը և դրա սահմանման ամսաթիվը:

4.4.5. Սահմանային գին չի սահմանվում:

4.4.6. Մրցութային փաստաթղթերի պարզաբանում

4.4.6.1. Մրցույթի Մասնակիցներն իրավասու են դիմելու Պատվիրատուին սույն Մրցութային փաստաթղթի պարզաբանման համար: Մրցութային փաստաթղթի պարզաբանման պահանջները պետք է ներկայացվեն գրավոր տեսքով՝ կազմակերպության ղեկավարի կամ մրցույթի Մասնակցի այլ պատասխանատու անձի ստորագրությամբ:

4.4.6.2. Պատվիրատուն պարտավորվում է խելամիտ ժամկետում պատասխանել ցանկացած հարցի, որը նա կստանա Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետի լրանալուց ոչ պակաս, քան 10 օր առաջ (4.6.5. կետ): Ընդ որում, պատասխանի պատճենը (առանց հարցի աղբյուրի մատնանշման) կուղարկվի մրցույթի՝ սույն Մրցութային փաստաթղթերը պաշտոնապես ստացած բոլոր Մասնակիցներին (4.3 ենթաբաժին):

4.4.7. Մրցութային փաստաթղթերում ուղղումներ մտցնելը

4.4.7.1. Պատվիրատուն մինչև Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետի լրանալը (4.6.5. ենթաբաժին) ցանկացած պահի իրավասու է ուղղումներ մտցնել սույն Մրցութային փաստաթղթի մեջ:

4.4.7.2. Սույն Մրցութային փաստաթղթերը պաշտոնապես ստացած մրցույթի բոլոր Մասնակիցները (4.3 ենթաբաժին) անհապաղ ծանուցվում են այսպիսի ուղղումների էության մասին օպերատիվ կապի միջոցների օգտագործմամբ (ֆաքս, էլեկտրոնային փոստ):

4.4.7.3.Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն կարող է երկարաձգել Մրցութային հայտերի ընդունման ժամկետը (4.4.8. կետ):

4.4.8. Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետի երկարաձգումը

4.4.8.1.Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն իրավունք ունի երկարաձգել՝ Մրցութային հայտերի ընդունման՝ 4.6.5. ենթաբաժնում սահմանված վերջնաժամկետը:

4.4.8.2. Սույն Մրցութային փաստաթղթերը պաշտոնապես ստացած՝ մրցույթի բոլոր Մասնակիցները (4.3. ենթաբաժին), անհապաղ գրավոր ծանուցվում են այդ մասին կապի միջոցների օգտագործմամբ (ֆաքս, էլեկտրոնային փոստ):

4.4.8.3. Պատվիրատուն նաև իրավասու է խնդրելու մրցույթի Մասնակիցներին՝ երկարաձգել Մրցութային հայտերի գործողության ժամկետը: Մրցույթի Մասնակիցն իրավասու է համաձայնվել այդպիսի խնդրանքի հետ կամ մերժել այն: Մրցութային հայտերի գործողության ժամկետը երկարաձգելու մասին՝ Պատվիրատուի խնդրանքի մերժումը չունի և ոչ մի բացասական հետևանք և մրցույթի այսպիսի Մասնակցի Մրցութային հայտը գործում է սկզբնապես սահմանված ժամկետի ընթացքում:

4.5. Մրցույթի Մասնակիցներին ներկայացվող պահանջներ: Ներկայացվող պահանջներին համապատասխանության հաստատում:

4.5.1. Մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջներ

4.5.1.1. Մրցույթին կարող է մասնակցել ցանկացած իրավաբանական անձ: Սակայն մրցույթում հաղթելու և Պատվիրատուի հետ Պայմանագիր կնքելու իրավունք ստանալու համար մրցույթի Մասնակիցը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

ա) մրցույթի Մասնակիցը պետք է տիրապետի անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և փորձի, ունենա ռեսուրսային հնարավորություններ (ֆինանսական, նյութատեխնիկական, արտադրական, աշխատանքային), կառավարչական կոմպետենտություն, փորձ և համբավ ու համանման պայմանագրերի կատարման ոչ պակաս քան 3 տարվա փորձ,

բ) մրցույթի Մասնակիցը պետք է օժտված լինի քաղաքացիական իրավունակությամբ ամբողջ ծավալով՝ Պայմանագրի կնքման և կատարման համար (պետք է գրանցված լինի սահմանված կարգով և ունենա գործունեության տեսակների կատարման համապատասխան գործող արտոնագրեր՝ Պայմանագրի շրջանակներում),

գ) մրցույթի Մասնակիցը չպետք է անվճարունակ կամ սնանկ լինի, գտնվի լուծարման գործընթացում, մրցույթի Մասնակցի գույքի՝ պայմանագրի կատարման համար էական մասի վրա չպետք է կալանք դրված լինի, մրցույթի Մասնակցի տնտեսական գործունեությունը չպետք է կասեցված լինի:

4.5.2. Սահմանված պահանջներին մրցույթի Մասնակցի համապատասխանությունը հաստատող փաստաթղթերին ներկայացվող պահանջները

4.5.2.1. Վերոշարադրյալի հետ կապված՝ մրցույթի Մասնակիցը պետք է Մրցութային հայտի կազմում ընդգրկի վերոնշյալ պահանջներին նրա համապատասխանությունը հաստատող հետևյալ փաստաթղթերը.

a) գործող խմբագրությամբ կանոնադրության Մասնակցի կողմից վավերացված կրկնօրինակը,

b) Պայմանագրի կատարման հետ կապված գործունեության տեսակների գործող արտոնագրերի Մասնակցի կողմից վավերացված կրկնօրինակները,

c) իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճեն,

d) Մասնակցի կողմից վավերացված հարկային մարմինների տեղեկանք՝ հարկերի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումներ կատարելու մասին,

e) Մասնակցի կողմից վավերացված դատական մարմինների տեղեկանք՝ լուծարման գործընթացքում կամ սնանկ չլինելու մասին,

f) այլ փաստաթղթեր (), որոնք մրցույթի Մասնակցի կարծիքով հաստատում են իր համապատասխանությունը սահմանված պահանջներին՝ այդ փաստաթղթերի տրամադրման նպատակը պարզաբանող համապատասխան մեկնաբանություններով:

4.5.2.2. Այն դեպքում, եթե մրցույթի Մասնակիցը գրանցված է Հայաստանի Հանրապետությունից դուրս, նա պարտավոր է ներկայացնել սույն Մրցութային փաստաթղթերի 4.5.2.1 կետով նախատեսված բոլոր փաստաթղթերը: Այն դեպքում, եթե Մասնակցի պետության օրենսդրությանը համապատասխան այս կամ այն փաստաթղթերի տրամադրումն անհնար է, Մասնակիցը պարտավոր է ներկայացնել տեղեկանք՝ այդպիսի պատճառների բացատրությամբ, ինչպես նաև (որքանով դա հնարավոր է) պահանջվողին բովանդակությամբ մոտ համանման փաստաթուղթ:

4.5.2.3. Բոլոր վերընշված փաստաթղթերը կցվում են Մրցութային հայտին՝ մրցույթի Մասնակցի կողմից:

4.5.2.4. Այն դեպքում, եթե որևիցե պատճառով մրցույթի Մասնակիցը չի կարող ներկայացնել պահանջվող փաստաթուղթը, նա պետք է կցի պահանջվող փաստաթղթի բացակայության պատճառը բացատրող, ինչպես նաև սույն պահանջին Մասնակցի համապատասխանության մասին Պատվիրատուին հավաստիացում բովանդակող, կամայական ձևով կազմված տեղեկանք:

4.6. Մրցութային հայտերի ներկայացումն ու դրանց ընդունումը

4.6.1. Ներկայացնելուց առաջ Մրցութային հայտը և դրա պատճենները պետք է ապահով ձևով կնքվեն ծրարներում (փաթեթներում, արկղերում և այլն): Մրցութային հայտը կնքվում է «Մրցութային հայտ» նշված բառերով ծրարում: Մրցութային հայտերը կնքվում են «Բնօրինակ» և «Կրկնօրինակ» նշված բառերով ծրարներում:

4.6.2. Այս ծրարներից յուրաքանչյուրի վրա անհրաժեշտ է նշել հետևյալ տեղեկությունները.

ա) Պատվիրատուի անվանումը և հասցեն 1.1.1. կետին համապատասխան,

բ) մրցույթի Մասնակցի ամբողջական ֆիրմային անվանումը և նրա փոստային հասցեն,

գ) պայմանագրի առարկան՝ 1.1.1. կետին համապատասխան:

4.6.3. Մրցութային հայտով և դրա պատճեններով՝ կնքված ծրարները տեղավորվում են մեկ արտաքին ծրարի մեջ, որը նույնպես պետք է ապահով կերպով կնքվի: Արտաքին ծրարի վրա նշվում է հետևյալ տեղեկատվությունը.

ա) Պատվիրատուի անունը և հասցեն՝ 1.1.1. կետին համապատասխան,

բ) Պայմանագրի առարկան՝ 1.1.1. կետին համապատասխան,

գ) «Չբացել մինչև 2019 թվականի մարտի 07, ժամը 10:00: Բացել միայն ԿԳՄ-ի նիստին» բառերը:

դ) մրցույթի Մասնակցի ամբողջական ֆիրմային անվանումը և նրա փոստային հասցեն:

4.6.4. Մրցույթի մասնակիցները պետք է ապահովեն իրենց մրցութային հայտերի առաքումը Պատվիրատուին՝ կոնտակտային անձ (1.1.2. կետ):

4.6.5. Մրցութայինի հայտերի վերջնաժամկետն է՝ 2019թ. մարտի 06 ժամը 16:00: Վերոնշյալ ժամանակից ուշ ստացված մրցութային հայտերը, կմերժվեն Պատվիրատուի կողմից առանց ըստ էության քննվելու՝ անկախ ուշացման պատճառներից:

4.6.6. Պատվիրատուն ծրարն առաքող անձին տալիս է ստացական այն մասին, որ ինքը ստացել է ծրարը՝ նշելով այն ստանալու ժամանակը:

4.7. Մրցույթին ներկայացված ծրարների բացումը

4.7.1. Պատվիրատուն անց է կացնում ընդունված ծրարների բացման հրապարակային ընթացակարգը Ծանուցման մեջ նշված նասցեով և ամսաթվին:

4.7.2. Այս ընթացակարգին կարող են ներկա գտնվել մրցույթի Մասնակիցների ներկայացուցիչները, ովքեր ժամանակին ներկայացրել են իրենց մրցութային հայտերը: Ծրարների բացման ընթացակարգին ներկա գտնվելու իրավունքը հավաստելու համար Մասնակիցների ներկայացուցիչները պետք է ունենան Պատվիրատուի՝ ծրարները ստանալու մասին ստացականների բնօրինակները :

4.7.3. Մրցույթի Մասնակիցների ներկա գտնվող ներկայացուցիչները գրանցվում են, իսկ գրանցման թերթը կցվում է ծրարների բացման արձանագրությանը:

4.7.4. Սույն ընթացակարգի ժամանակ Մրցութային հանձնաժողովը բացում է ստացված յուրաքանչյուր ծրար և հրապարակում է հետևյալ տեղեկությունները՝ հիմնվելով Մրցութային հայտի նյութերի վրա.

ա) մրցույթի Մասնակցի անվանումը և հասցեն,

բ) կատարվող աշխատանքների անվանումը և Մրցութային հայտի ընդհանուր գինը,

գ) այլ տեղեկություններ, որոնք Մրցութային հանձնաժողովը անհրաժեշտ է համարում հրապարակել:

4.7.5. Բացման ընթացակարգի ժամանակ Մրցութային հանձնաժողովը վարում է համապատասխան արձանագրություն, որտեղ արտացոլված է Մրցութային հանձնաժողովի հրապարակած ողջ տեղեկատվությունը:

4.8. Մրցութային հայտերի գնահատումը

4.8.1. Ընդհանուր դրույթներ

4.8.1.1. Մրցութային հայտերի գնահատումն իրականացնում է ԿԳՄ-ը և ԿԳՄ-ի կողմից (անհրաժեշտության դեպքում) ներգրաված անձինք (փորձագետներ ու մասնագետներ):

4.8.1.2. Մրցութային հայտերի գնահատումը ներառում է ընտրական փուլը (4.8.2. կետ) և գնահատման փուլը (4.8.3. կետ):

4.8.2. Ընտրական փուլ

4.8.2.1. Ընտրական փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը ստուգում է.

ա) մրցութային հայտերի ձևակերպման ճշգրտությունը և դրանց համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթերին ըստ էության,

բ) մրցույթի մասնակիցների համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթերի պահանջներին,

գ) ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթի պահանջներին:

4.8.2.2. Ընտրական փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը կարող է մրցույթի Մասնակիցներից պահանջել իրենց մրցութային հայտերի պարզաբանումները և լրացումները, այդ թվում՝ բացակայող փաստաթղթերի տրամադրում: Ընդ որում, Մրցութային հանձնաժողովն իրավասու չէ բացատրություն պահանջել կամ պահանջել պարզաբանումներ կամ փաստաթղթեր, որոնք փոխում են Մրցութային հայտի էությունը:

4.8.2.3. Մրցութային հայտերի ձևակերպման ճշգրտությունը ստուգելիս Մրցութային հանձնաժողովն իրավասու է ուշադրություն չդարձնել մանր թերություններին և վրիպակներին, որոնք չեն ազդում Մրցութային հայտի էության վրա: Մրցութային հանձնաժողովը կարող է ուղղել ակնհայտ թվաբանական և քերականական սխալները:

4.8.2.4. Ընտրական փուլի անցկացման արդյունքներով Մրցութային հանձնաժողովը մերժում է այն մրցութային հայտերը, որոնք.

ա) էապես չեն համապատասխանում սույն Մրցութային փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջներին,

բ) տրված են մրցույթի Մասնակիցների կողմից, ովքեր չեն համապատասխանում սույն Մրցութային փաստաթղթերի պահանջներին,

գ) տրված են մրցույթաի Մասնակիցների կողմից, ովքեր չեն տրամադրել սույն փաստաթղթերով պահանջվող փաստաթղթերը, կամ ներկայացված փաստաթղթերում առկա են Մասնակցի կամ

նրա կողմից առաջարկվող արտադրանքի մասին ոչ հավաստի տեղեկություններ,

դ) ներառում են սույն Մրցութային փաստաթղթերով սահմանված պայմաններին չհամապատասխանող առաջարկներ,

ե) տրված են մրցույթի Մասնակիցների կողմից, ովքեր չեն համաձայնվել Մրցութային հանձնաժողովի առաջարկի հետ՝ ուղղելու իրենց մրցութային հայտերի ակնհայտ թվաբանական կամ քերականական սխալները:

4.8.3. Գնահատման փուլ

4.8.3.1. Գնահատման փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը համադրում և գնահատում է Մրցութային հայտերը՝ ըստ Մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման չափանիշների՝ ելնելով հետևյալ չափանիշներից.

ա) աշխատանքների արժեքը և դրանց վճարման պայմանները,

բ) Մասնակցի որակավորումը (նմանատիպ պայմանագրերի քանակ),

գ) Մասնակցի հուսալիությունը (փորձ, ռեսուրսային հնարավորություններ և այլն):

4.9.Վերասակարկություն (գնի կարգավորում)

4.9.1.Մրցույթի Կազմակերպիչը իրեն վերապահում է իրավունք՝ հնարավորություն տալ մրցույթի Մասնակիցներին կամավոր բարձրացնելու իրենց Մրցութային հայտերի գրավչությունը նախնական (հայտում նշված) գնի իջեցմամբ (այսուհետև՝ «Վերասակարկության ընթացակարգ», «Վերասակարկություն»), պայմանով, որ հայտի այլ դրույթներ կմնան անփոփոխ:

4.9.2.Վերասակարկության ընթացակարգի անցկացման մասին, ինչպես նաև դրա անցկացման կարգի մասին որոշումը ընդունում է Մրցութային հանձնաժողովը ինքնուրյուն՝ սույն Մրցութային փաստաթղթերի դրույթներին համաձայն: Սպասվում է, որ վերասակարկությունը կանցկացվի այն դեպքերում, եթե մասնակիցների կողմից հայտերում հայտարարված գները, ըստ Մրցութային հանձնաժողովի բավականաչափ բարձրացված են կամ մրցույթի Կազմակերպիչը ծրարների բացումից հետո մինչև մրցույթի Հաղթողի որոշելը կստանա խնդրանք վերասակարկություն անցկացնելու մասին այն մրցույթի Մասնակիցներից որևիցէ մեկից, ում հայտը նախնական դասակարգման ընթացքում դասվել է չորրորդ տեղից ոչ ցածր:

4.9.3.Անկախ վերասակարկություն անցկացնելու պատճառներից, այն անցկացնելիս, նրանում մասնակցելու համար պարտադիր կարգով հրավիրվում են այն մասնակիցները, որոնց հայտերը չեն մերժվել և նախնական դասակարգման արդյունքում դասվել են մեկից չորրորդ տեղերում: Մրցույթի մնացած Մասնակիցները, որոնց հայտերը չեն մերժվել, կարող են հրավիրվել մասնակցել վերասակարկության ընթացակարգին Մրցութային հանձնաժողովի որոշմամբ՝ ցանկացած կազմով: Հանձնաժողովը իրավունք ունի թույլատրել մասնակցել վերասակարկությանը նաև Մասնակիցների այլընտրանքային առաջարկությունները՝ այդպիսիների առկայության դեպքում: Նախնական դասակարգման ընթացքում այլընտրանքային առաջարկությունները հաշվի են առնվում հիմնականների հետ հավասար:

4.9.4.Վերասակարկությունը կարող է անցկացվել միայն չմերժված հայտերի գնահատումից, համեմատությունից և նախնական դասակարգումից հետո: Ընդ որում, ոչ գնային չափանիշներով հայտերի գնահատման արդյունքները կարող են ինչպես հայտնվել, այնպես էլ չհայտնվել մրցույթի Մասնակիցներին; եթե ոչ գնային չափանիշներով Մասնակիցների գնահատման արդյունքները հայտնվում են, ապա դրանք պետք է հայտնվեն վերասակարկությանը հրավիրված բոլոր մրցույթի Մասնակիցներին միաժամանակ՝ միասնական ձևով և ծավալով:

4.9.5.Վերասակարկությանը կարող են մասնակցել հրավիրվածների թվից ցանկացած քանակի մասնակիցներ: Վերասակարկությանը հրավիրված մրցույթի Մասնակիցը կարող է չմասնակցել վերասակարկությանը, այդ դեպքում նրա հայտը շարունակում է գործել նախկինում հայտարարված գնով: Այդպիսի Մասնակիցների ներկայացուցիչները վերասակարկությանը չեն թույլատրվում:

4.9.6.Վերասակարկությունը կարող է ունենալ անցկացման առերես, հեռակա կամ առերես-հեռակա (խառը) ձև:

4.9.7.Առերես վերասակարկությանը պետք է ժամանեն անձամբ Մրցութային հայտը ստորագրած անձինք կամ մրցույթի Մասնակցի կողմից՝ իր անունից վերասակարկությանը մասնակցելու և Մասնակցի համար պարտադիր գներ հայտարարելու լիազորություն ունեցող անձինք: Բոլոր դեպքերում նշված անձինք վերասակարկությունից առաջ պետք է Մրցութային հանձնաժողովին ներկայացնեն իրենց իրավասությունները հաստատող փաստաթղթեր (անձնագիրը, ինչպես նաև լիազորագրի բնօրինակը **Ошибка! Источник ссылки не найден.**գ ենթակետին համապատասխան) կամ ղեկավար նշանակելու մասին հրամանը և հիմնադիրների ժողովի արձանագրությունից քաղվածքը՝ վերասակարկության ընթացակարգին անձամբ ղեկավարի ժամանման դեպքում:

4.9.8.Այդ անձինք իրենց հետ պետք է ունենան ծրարներ, որոնք պետք է պարունակեն փաստաթղթեր, որում (ազատ ոճով) հստակ նշված է հայտի նվազագույն գինը՝ ներառյալ հարկերը, որից ցածր վերասակարկության ժամանած մասնակցի ներկայացուցիչը իրավունք չունի սակարկել: Այդ գինը վավերացվում է երկու ստորագրությամբ՝ մասնակցի ղեկավարի և մասնակցի տնտեսական ծառայության ղեկավարի (բացակայության դեպքում՝ գլխավոր հաշվապահի), ինչպես նաև կնքվում է կազմակերպության կնիքով:

4.9.10.Վերասակարկությունից առաջ նվազագույն գին պարունակող փաստաթղթերով ծրարները ստորագրությամբ հանձնվում են Մրցութային հանձնաժողովին: Մասնակիցները, որոնց ներկայացուցիչները չեն հանձնել նվազագույն գին պարունակող փաստաթղթերով ծրարները, չեն մասնակցում վերասակարկությանը և նրանց Մրցութային հյատերը շարունակում են գործել նախկինում հայտարարված գնով: Նվազագույն գին պարունակող փաստաթղթի լրացման և ստորագրման էական խախտում հայտնաբերելիս, Մասնակցի վերասակարկության ընթացքում հայտարարած ցանկացած գին չի ընդունվում և նա համարվում է այդ ընթացակարգում չմասնակցող:

4.9.11.Առերես վերասակարկության ժամանակ մրցույթի Կազմակերպիչը՝ ի դեմս նախագահի կամ Մրցութային հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի բացում է մասնակիցների կողմից ներկայացված՝ նվազագույն գին պարունակող փաստաթղթերով ծրարները և ծանոթացնելով դրա պարունակության հետ միայն Մրցութային հանձնաժողովի անդամներին (առանց մասնակիցներին հրապարակելու) առաջարկում է բոլոր հրավիրված մասնակիցներին հրապարակավ հայտարարել նոր գները: Վերասակարկությունը անցկացվում է Մրցութային հանձնաժողովի առնվազն երկու անդամի ներկայությամբ: Մրցութային հանձնաժողովը իրավունք ունի նշանակի վերասակարկության քայլը մինչև վերասակարկության սկիզբը ինքնուրյուն (այդ դեպքում մրցույթի Կազմակերպիչը կզգուշացնի այդ մասին մասնակիցներին վերասակարկության հրավիրելու պահին) կամ որոշի այն մասնակիցների հետ համաձայնեցնելով՝ վերասակարկություն անցկացնելու ընթացքում: Վերասակարկությունը վարվում է հետևողականորեն բոլոր մասնակիցների հետ՝ հերթական գնի հայտարարումը բացթողնելու իրավունքով, մինչև բոլոր մասնակիցները չհայտարարեն, որ հայտնել են վերջնական գինը և հետագայում այն չեն իջեցնի: Այն դեպքում, երբ վերասակարկության քայլը որոշվել է նախորոք Մրցութային հանձնաժողովը՝ համաձայնեցնելով վերասակարկության մասնակիցների հետ, իրավունք ունի այն իջեցնի վերասակարկության ընթացքում, բայց ոչ ավելին քան մինչև նախնական քայլի 1/10: Եթե պարզվի, որ մասնակցի կողմից վերասակարկության արդյունքում հայտարարված վերջնական գինը, բարձր կամ հավասար է տվյալ մասնակցի՝ նվազագույն գին պարունակող փաստաթղթերով ծրարում նշվածից, Մրցութային հանձնաժողովը ընդունում է այն վերջնական գինը, որը նա հայտարարել է վերասակարկության ընթացքում և կատարում է համապատասխան հայտարարությունը:

4.9.12.Եթե, վերասակարկության ընթացքում մասնակցի հայտարարած գինը որևիցէ պահին պարզվի ավելի ցածր է տվյալ մասնակցի՝ նվազագույն գին պարունակող փաստաթղթերով ծրարում նշվածից, Մրցութային հանձնաժողովը կհրապարակի այդ ծրարում պա-

րունակվող գինը, այն ընդգրկելով արձանագրությունում և այդ գինը կհամարի հայտի վերջնական գին վերասակարկությունից հետո, իսկ հայտարարվածը կմերժի, ընդ որում տվյալ մասնակիցը իրավունք չունի ներկայացնել նոր գնային առաջարկներ:

4.9.13.Առերես - հեռակա (խառը) վերասակարկության ընթացքում մրցույթի Մասնակիցները, որոնք հրավիրված են եղել Կազմակերպիչի կողմից մասնակցել այդ ընթացակարգին, իրավունք ունեն կամ ժամանեն անձամբ (ի դեմս իրենց լիազոր ներկայացուցիչների) կամ կազմակերպիչի անունով ուղղարկեն նվազագույն գին պարունակող փաստաթղթով ծրարը, որը հանդիսանում է տվյալ մասնակցի հայտի վերջնական գինը: Առերես – հեռակա վերասակարկությունը անցկացվում է առերես վերասակարկությունների կանոններով, բացառությամբ, որ նվազագույն գներ պարունակող փաստաթղթերով ծրարների ընդունումից հետո, մինչև նոր գների հրապարակային հայտարարումը առերես մասնակցող մասնակիցներին, Մրցութային հանձնաժողովը բացում է այն մասնակիցների ներկայացրած նվազագույն գին պարունակող փաստաթղթերով ծրարները, որոնք ներկա չեն վերասակարկությանը («հեռակա մասնակցություն») և հայտարարում է այնտեղ նշված գները:

4.9.14.Մրցույթի Մասնակիցները, որոնք մասնակցել են վերասակարկությանը և իջեցրել են իրենց գները, պարտավոր են մրցույթի Կազմակերպիչի հարցմամբ լրացուցիչ ներկայացնեն իրենց առևտրային առաջարկությունը սահմանող ճշգրտված փաստաթղթերը՝ հաշվի առնելով վերա սակարկությունից հետո ստացված նոր գինը: Գնի փոփոխությունը դեպի ցածրացում չպետք է հանգեցնի հայտի այլ պայմանների կամ գնայինից բացի այլ առաջարկությունների փոփոխությանը:

4.9.15.Մրցույթի Մասնակցի առաջարկությունը գնի բարձրացման մասին չի քննարկվում, այդպիսի մասնակիցը համարվում է վերասակարկությանը չմասնակցած:

4.9.16.Վերասակարկություն անցկացնելուց հետո Մրցութային հանձնաժողովը իրականացնում է անհրաժեշտ հաշվարկներ նախկինում հայտարարված չափանիշներին համապատասխան և հաշվի է առնում վերասակարկության ընթացում ստացված գները՝ հայտերը գնահատելիս և առաջարկների հանրագումարային դասակարգումը կառուցելիս: Վերասակարկությանը հրավիրված, բայց դրանում չմասնակցած մասնակիցների հայտերը հաշվի են առնվում նախնական գնով առաջարկների հանրագումարային դասակարգումը կառուցելիս

4.9.17.Վերասակարկությանը մասնակցությունը մրցույթի Կազմակերպիչի կողմից չի գնահատվում որպես 4.4.1.2 կետի պահանջների խախտում:

4.10. Մրցույթի հաղթողին որոշելը

4.10.1. Նիստի ժամանակ Մրցութային հանձնաժողովը որոշում է մրցույթի Հաղթողին, որպես Մրցույթի մասնակցի, որի Մրցույթային հայտը գրավել է առաջին տեղը ըստ Մրցութային հայտերի՝ Պատվիրատուի համար նախընտրելիության աստիճանի՝ ըստ հաստատված գնահատման չափանիշների:

4.10.2. ԿԳՄ մրցույթի Հաղթողի մասին որոշումը ձևակերպվում է ԿԳՄ նիստի արձանագրությամբ:

4.10.3. Մրցույթի Մասնակիցը անհապաղ տեղեկացվում է մրցույթի Հաղթող ճանաչվելու մասին, ինչպես նաև մրցույթի արդյունքների մասին արձանագրության ստորագրման տեղի և կարգի մասին: (ենթաբաժին 4.11):

4.11. Մրցույթի արդյունքների մասին Արձանագրության ստորագրում:

4.11.1. Մրցույթի արդյունքների մասին Արձանագրության ստորագրումը նշանակվում է (կանխավ) մրցույթի արդյունքների ամփոփման ամսաթվից 5 (հինգ) օրվա ընթացքում՝ Պատվիրատուի հասցեով: Հատուկ դեպքերում մրցութային հանձնաժողովը կատող է երկարացնել տվյալ ժամկետը:

4.11.2. Մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրվում է երկու օրինակով, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

4.11.3. Մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը յուրաքանչյուր կողմի հետ ստորագրվում է այն անձի կողմից, որը իրավունք ունի գործել մրցույթի Մասնակցի անունից առանց լիազորագրի՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, կամ պատշաճ կերպով լիազորված անձի կողմից՝ լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ լիազորված անձի), ինչպես նաև ամրակցվում է կողմերի կնիքներով: Ընդ որում յուրաքանչյուր կողմ իրավասու է պահանջել մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը ստորագրած անձի իրավասության հաստատումը:

4.11.4. Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը, եթե մրցույթի Հաղթողը՝

ա) չի ստորագրի Պայմանագիրը՝ մրցույթի արդյունքների մասին Արձանագրությամբ սահմանված ժամկետում,

բ) կհրաժարվի Պայմանագրի ստորագրումից՝ 1.2.5 կետերում սահմանված պայմաններով,

գ) չի կատարի սույն Մրցութային փաստաթղթերով նախատեսված այլ պայմաններ:

4.12. Պայմանագրի ստորագրում

4.12.1. Պայմանագիրը Պատվիրատուի և մրցույթի Հաղթողի միջև ստորագրվում է մրցույթի արդյունքների մասին Արձանագրության հիման վրա (ենթաբաժին 4.11) 5 (հինգ) օրվա ընթացքում:

4.12.2. Այն դեպքում, եթե ՀՀ գործող օրենսդրությամբ և Պատվիրատուի հիմնադիր փաստաթղթերով Պատվիրատուի կառավարման կոմպետենտ մարմինների կողմից (Բաժնետերերի ընդհանուր ժողովի, Տնօրենների խորհրդի և այլն), պահանջվում է Հաղթողի առաջարկած պայմանագրի պայմանների համապատասխան նախնական համաձայնեցում (հավանություն, հաստատում), Հաղթողի հետ պայմանագիրը կնքվում է միայն այդպիսի համաձանեցումից (հավանություն, հաստատում) հետո, իսկ 4.12.1 կետում նշված ժամկետը հաշվվում է այդպիսի համաձայնություն (հավանություն, հաստատում) ստանալուց հետո:

4.11.3. Բոլոր այն հարցերի շուրջ, որոնք չեն արտացոլվել մրցույթի անցկացման մասին Ծանուցման, սույն Մրցութային փաստաթղթերի և մրցույթի Հաղթողի Մրցութային հայտի մեջ, կողմերը իրավունք ուեն բանակցություններ վարել: Բանակցությունների ընթացքը և ձեռք բերված արդյունքները ամրագրվում են մինչպայմանագրային բանակցությունների Արձանագրությունում:

4.12.4. Պայմանագրի պայմանները որոշվում են 1.2.5. կետին համապատասխան:

4.13. Մրցույթի Մասնակիցների տեղեկացումը մրցույթի արդյունքների մասին

4.13.1. Մրցույթի արդյունքների մասին արձանագրության ստորագրումից հետո Պատվիրատուն մրցույթի բոլոր Մասնակիցներին իրենց գրավոր հարցումին ծանուցում կուղարկի մրցույթի արդյունքների մասին:

4.13.2. Պատվիրատուն կհրապարակի մրցույթի արդյունքների մասին տեղեկությունները կամ այն մասին, որ մրցույթը տեղի չի ունեցել «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ www.mck.am կորպորատիվ ինտերնետային սայթում, բաժին «Գնումներ»:

4.13.3. Եթե արձանագրության ստորագրումից մինչև պայմանագրի ստորագրումը հաղթողը փոխվում է (օրինակ՝ հրաժարման արդյունքում) Մասնակիցները նույն կարգով են տեղեկացվում նոր հաղթողի մասին:

4.14 Մրցույթի Մասնակցի կողմից պարատավորությունների կատարման ապահովումը բանկային երաշխիքի միջոցով

4.14.1 Մրցույթի Մասնակիցը իր Մրցութային հայտի կազմում ներկայացնում է մրցույթի մասնակցության և Մրցութային հայտի ներկայացման հետ կապված պարտավորությունների կատարման ապահովումը՝ Մրցութային հայտի առաջարկվող ընդհանուր գումարի 2%-ի չափով:

4.14.2 Մրցույթի Մասնակցի պարտավորությունների կատարման ապահովումը պետք է ունենա բանկային երաշխիքի ձև, որը կազմված է հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 383-394 հոդվածների պահանջները և հետևյալ պայմանները.

4.14.2.1 Բանկային երաշխիքը պետք է լինի անետկանչելի:

4.14.2.2 Բանկային երաշխիքի գումարը պետք է արտահայտված լինի ՀՀ դրամով:

4.14.2.3 Բանկային երաշխիքը պետք է գործի Մրցութային հայտի գործողության ժամկետի ընթացքում:

4.14.2.4 Որպես բենեֆիցիար բանկային երաշխիքում պետք է նշված լինի Պատվիրատուն, իսկ պրինցիպալ՝ մրցույթի Մասնակիցը, երաշխավոր՝ բանկը, որը տվել է բանկային երաշխիք:

4.14.2.5 Բանկային երաշխիքում պետք է նախատեսված լինի մրցույթի Պատվիրատուի բացարձակ իրավունքը պահանջել և ստանալ բանկային երաշխիքի գումարը հետևյալ դեպքերում.

a) Մրցութային հայտի գործողության ժամկետի ընթացքում դրա փոփոխության կամ հետ կանչելու;

b) ներկայացված Մրցութային հայտում ակնհայտ կեղծ տեղեկություններ ներկայացնելու կամ տեղեկատվությունը կամ փաստաթղթերը դիտավորյալ աղավաղելու;

c) մրցույթի Մասնակցի՝ մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու;

d) մրցույթի Հաղթողի՝ Պայմանագիր կնքելուց հրաժարվելու:

4.14.3 Բանկային երաշխիքում պետք է նախատեսված լինի, որ ապահովման գումարը պահանջելու և ստանալու համար մրցույթի Պատվիրատուն երաշխավորողին ուղղարկում է միայն գրավոր պահանջ և բանկային երաշխիքի բնօրինակը:

4.14.4 Բանկային երաշխիքով վճարումը պետք է իրականացվի բենեֆիցիարի դիմելու պահից 5 բանկային օրվա ընթացում:

4.14.5 Բանկային երաշխիքում չպետք է լինեն պայմաններ կամ պահանջներ, որոնք հակասում են վերոգրյալին կամ վերը շարադրվածը դարձնում են կատարման համար անհնար:

4.14.6 Ներկայացված բանկային երաշխիքի հուսալիությունը և թույլատրելիությունը կորոշվի Պատվիրատուի մեթոդոլոգիայի միջոցով:

4.14.7 Մրցութային հայտի պատճենների կազմում պետք է ներառվեն բանկային երաշխիքների պատճենները:

4.14.8 Բանկային երաշխիքը պետք է տրամադրվի տրամադրվի բանկի, ապահովագրական ընկերության կամ այլ վարկային կազմակերպության կողմից, որոնց մասին ստույգ հայտնի է, որ նրանք չեն հանդիսանում անվճարունակ, սնանկ, չեն գտնվում արտաքին կառավարման ներքո կամ նրանց լիցենզիաները կասեցված չեն ամբողջությամբ կամ մասնակի:

4.14.9 Մրցույթի հաղթողին բանկային երաշխիքը վերադարձնում են Պայմանագիր կնքելու պահին: Մրցույթի մնացած Մասնակիցներին բանկային երաշխիքը վերադարձվում է (նրանց հարցմամբ) Պայմանագիր կնքելուց կամ մրցույթը չկայացած հայտարարելուց կամ հայտի գործողության ժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում (կախված, թե որը ավելի շուտ վրա կհասնի):

4.14.10 Բանկային երաշխիքը կարող է ներկայացվել երաշխիք տրամադրած բանկին՝ պարտավորության ապահովության գումարը վճարելու համար, մրցույթի Պատվիրատուի որոշման հիման վրա՝ մրցույթի Մասնակցի կողմից իր պարտավորությունների խախտման դեպքում (ենթակետ 4.14.2.5):

4.14.11 Մրցույթի Մասնակիցների կողմից պարտավորությունների ապահովման չներկայացումը հիմք է հանդիսանում Մրցութային հայտի մերժման համար:

5.Մրցույթի մասնակցի պարտավորությունների կատարման ապահովումը տուժանքի ձևով

5.1.1.Մրցութային հայտերի ներկայացման հետ կապված մրցույթի Մասնակիցների պարտավորությունները ապահովվում են տուժանքով [նշվում է ապահովման գումարը (Պայմանագրի ենթադրվող արժեքի 3% ոչ ավել) կամ ապահովման գումարի հաշվարկման կարգը, օրինակ՝ « Պայմանագրի՝ Մասնակցի առաջարկած գնի 2% (հաշվի առնելով հարկերը):] դրամի չափով:

5.1.2.Տուժանքներով ապահովում են մրցույթի Մասնակցի հետևյալ պարտավորությունները՝

ա) Մրցութային հայտը իր գործողության ժամկետում (կետ 4.4.1.6) չփոխելու և հետ չկանչելու պարտականություն՝ Մրցութային հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո (կետ 5.6.6).

բ) պարտականությունը՝ ակնհայտ կեղծ տեղեկություններ չներկայացնելու կամ դիտավորյալ չխեղաթյուրելու տեղեկատվությունը կամ փաստաթղթերը, որոնք ներկայացված են Մրցութային հայտի կազմում,

գ) 4.10. ենթաբաժնում նախատեսված կարգով մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը ստորագրելու ՝ մրցույթի Մասնակցի մրցույթի Հաղթող ճանաչելու դեպքում և նրան այդ մասին պատշաճ ծանուցելու պարտականությունը.

դ) սույն Մրցութային փաստաթղթերով սահմանված կարգով Պայմանագիր կնքելու պարտականություն (ենթաբաժին 4.11):

5.1.3.Վերոհիշյալ պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում մրցույթի Մասնակիցը պարտավոր է տուժանքի վճարման մասին մրցույթի Կազմակերպչի կողմից պահանջների ներկայացումից հետո տասը օրվա ընթացքում փոխանցել տուժանքի գումարը այդ պահանջում ներկայացված վավերապայմաններով:

5.1.4.Սույն բաժնի և առաջարկի հայտի կազմում ներկայացված տեքստերը միասին ունեն տուժանքի գրավոր համաձայնագրի ուժ:

5.1.5.Մրցույթի Կամակերպիչի իրեն իրավունք է վերապահում իր հայեցողությամբ պահանջել տուժանքի գումարի ընդհամենը մեկ մասը:

5.1.6.Մրցութային հայտի տեքստում մրցույթի Մասնակցի՝ տուժանքի վճարման պարտավորության բացակայությունը Մրցութային փաստաթղթերին համապատասխան կամ հայտում տուժանքի մասին պարտականությունների արտացոլումը, որը վերոշարադրյալ պահանջներին չի համապատասխանում, կարող է հիմք հանդիսանալ մրցույթի Մասնակիցի Մրցութային հայտի մերժման համար:

6. Մրցութային հայտում ներառվող փաստաթղթերի հիմնական ձևերի նմուշները

6.1. Օֆերտայի ներկայացման մասին նամակ (ձև 1)

6.1.1. Օֆերտայի ներկայացման մասին նամակի ձևը

ձևի սկիզբ

«----» ----------թվականի

№----------

Հարգելի պարոնայք

Ուսումնասիրելով մրցույթի անցկացման Ծանուցումը՝ հրատարակված[նշվում է մրցույթի անցկացման մասին Ծանուցագրի հրապարակման ամսաթիվը և հրատարակությունը, որում այն հրատարակվել է], և Մրցութային փաստաթղթերը, և ընդունելով դրանցում սահմանված մրցույթի պայմանները և պահանջները,

_____

(Մասնակցի ամբողջական անվանումը՝ նշելով կազմակերպաիրավական ձևը)

գրանցված հետևյալ հասցեով

_____

(մրցույթի Մասնակցի իրավաբանական հասցեն)

առաջարկում է հետևյալ աշխատանքների կատարման Պայմանագիր կնքել՝

_____

(Պայմանագրի առարկայի կրճատ նկարագրություն)

ընդհանուր գումարով

Մրցութային հայտի վերջնական արժեքը, առանց ԱԱՀ, դրամ

_____

(վերջնական արժեքը, դրամ, առանց ԱԱՀ)

բացի դրանից ԱԱՀ, դրամ

ընդամենը ԱԱՀ-ով, դրամ

_____

(ընդհանուր արժեքը, դրամ, ԱԱՀ-ով)

Սույն Մրցութային հայտը ունի օֆերտայի իրավական կարգավիճակ և գործում է մինչև ____“ ___ “_____ թվականը *(ոչ պակաս քան 40 օր սկսած Մրցութային հայտերի ծրարների բացման օրվանից):*

Սույն Մրցութային հայտը լրացվում է հետևյալ փաստաթղթերով՝ ներառյալ անբաժանելի հավելված-ները՝

Կոմերցիոն առաջարկ (համաձայն մրցութային փաթեթի թիվ 2 հավելվածի) __ թ.

Պայմանագրի նախագծի տարաձայնությունների Արձանագրությունը (ձև 2) - ____թ.

Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկը (ձև 3) - ____թ.

Համանման պայմանագրերի կատարման ծավալների և ցանկի մասին տեղեկանք (ձև 4) -

____թ.

Մրցույթի Մասնակցի համապատասխանությունը սահմանված պահանջներին հաստատող փաստաթղթեր (բաժին 4.5.) ____-___թ.

_____

(Կ.Տ. ստորագրություն)

_____

(ստորագրողի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

6.1.2. Լրացման հրահանգներ

6.1.2.1. Նամակը հարկավոր է ձևակերպել մրցույթի Մասնակցի պաշտոնական բլանկի վրա: Մրցույթի Մասնակիցը տալիս է համար և ամսաթիվ՝ իր մոտ ընդունված փաստաթղթաշրջանարության կանոններին համապատասխան:

6.1.2.2. Մրցույթի Մասնակիցը պետք է նշի իր լրիվ անվանումը (կազմակերպչաիրավական ձևի նշումով) և իրավաբանական հասցեն:

6.1.2.3. Մրցույթի Մասնակիցը պետք է աշխանքների կատարման արժեքը նշի թվերով և բառերով, դրամով առանց ԱԱՀ, ԱԱՀ-ի մեծությունը և ԱԱՀ-ի հետ միասին՝ աշխատանքների գնի Կոմերցիոն առաջարկին համապատասխան (այունակ «ԸՆԴՀԱՆՈՒՐ»): Գինը հարկավոր է նշել XXX XXX XXX,XX դրամ ձևաչափով, օրինակ՝ «1 234 567,89 դրամ (Մեկ միլիոն երկու հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր վաթսունյոթ դրամ ութսունինը լումա)»:

6.1.2.4. Մրցույթի Մասնակիցը պարտավոր է նշել մրցույթին մասնակցելու Հայտի գործողության ժամկետը՝ 4.4.2.1 ենթակետին համաձայն:

6.1.2.5. Մրցույթի մասնակիցը պետք է թվարկի և նշի օֆերտայի ներկայացման մասին նամակին կցվող՝ մրցույթի Մասնակցի տեխնիկաառևտրային առաջարկի էությունը որոշող փաստաթղթերից յուրաքանչյուրի ծավալը:

6.1.2.6. Նամակը պետք է ստորագրվի և ամրակցի կնիքով 4.4.1.3 և 4.4.1.4 ենթակետերի պահանջներին համապատասխան:

6.2. Պայմանագրի նախագծի տարաձայնությունների Արձանագրություն (ձև 2)

6.2.1. Պայմանագրի նախագծի տարաձայնությունների Արձանագրության ձև

ձևի սկիզբ

«----» ----------թվականի

թիվ ----------

Պայմանագրի նախագծի տարաձայնությունների Արձանագրություն

Մրցույթի մասնակցի հասցեն և անվանումը՝ _____

Պայմանագրի «Պարտադիր» պայմանները

№	Պայմանագրի նախագծի կետի № (բաժին 3)	Ելակետային ձևակերպումներ	Մրցույթի Մասնակցի առաջարկները	Ծանոթագրություններ, հիմնավորումներ
1.				
2.				
3.				

Պայմանագրի «Ցանկալի» պայմաններ

№	Պայմանագրի նախագծի № կետը (բաժին 3)	Ելակետային ձևակերպումներ	Մրցույթի Մասնակցի առաջարկները	Ծանոթագրություններ,, հիմնավորումներ
1.				
2.				
3.				

_____

(Կ.Տ. ստորագրություն)

_____

(ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

6.2.2. Պայմանագրի նախագծի տարածայնությունների Արձանագրության լրացման հրահանգներ

6.2.2.1. Մրցույթի Մասնակիցը բերում է օֆերտայի ներկայացման մասին նամակի համարը և ամսաթիվը:

6.2.2.2. Մրցույթի Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում կազմակերպաիրավական ձևը) և հասցեն:

6.2.2.3. Եթե մրցույթի Մասնակիցը իր Մրցութային հայտի հետ միասին չի ներկայացնում տվյալ ձևը, դա նշանակում է, որ իր կողմից լիովին ընդունվում է ներկայացված Պայմանագրի նախագիծը (բաժին 3):

6.2.2.4. Այն դեպքում, եթե մրցույթի Մասնակիցը ունի Պայմանագրի նախագծում փոփոխություններ մտցնելու առաջարկներ, մրցույթի Մասնակիցը պետք է իր մրցութային հայտի կազմի մեջ ներկայացնի տարածայնությունների տվյալ արձանագրությունը: Տարածայնությունների պատրաստված արձանագրությունում մրցույթի Մասնակիցը պետք է հստակ տարանջատի Պայմանագրի՝ իր համար պարտադիր և ցանկալի պայմանները: Այստեղ «Պարտադիր» են համարվում այն առաջարկները և պայմանները, որոնք չընդունելու դեպքում նա կհրաժարվի Պայմանագիրը ստորագրելուց: «Ցանկալի» են այստեղ համարվում Պայմանագրի պայմանների այն առաջարկները, որոնք նա առաջարկում է Պատվիրատուի քննարկմանը, որոնց մերժումը

Պատվիրատուի կողմից, սակայն, չի հանգեցնի մրցույթի Մասնակցի՝ մրցույթի Հաղթող ճանաչվելու դեպում Պայմանագրի ստորագրումից հրաժարման:

6.2.2.5. Պայմանագրի պայմանները որոշվելու են 1.2.5 կետին համապատասխան:

6.2.2.6. Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում մինչ Պայմանագրի ստորագրումը քննարկել և ընդունել Պայմանագրի առաջարկները և լրացուցիչ (սկզբունքային բնույթ չկրող) փոփոխությունները: Այն դեպքում, եթե կողմերը համաձայնության չգան այդ փոփոխությունների վերաբերյալ, ապա կողմերը պարտավորված կլինեն Պայմանագիրը ստորագրել այն պայմաններով, որոնք շարադրված են սույն Մրցութային փաստաթղթերում և մրցույթի Հաղթողի մրցութային հայտում:

6.2.2.7. Ցանկացած դեպքում Մրցույթի Մասնակիցը պետք է ի նկատի ունենա, որ՝

ա) եթե Պայմանագրային այն պարտադիր առաջարկներից և պայմաններից որևէ մեկը, որը առաջ է քաշվել Մասնակցի կողմից, Պատվիրատուի համար անընդունելի կլինի, այդ մրցութային հայտը կմերժվի անկախ տեխնիկաառևտրային առաջարկների բովանդակությունից:

բ) ամեն դեպքում մրցույթի Մասնակցի կողմից Պատվիրատուի պատրաստած պայմանագրի սկբնական նախագծի տարաձայնությունների արձանագրությունը ներկայացնելը չի զրկում մրցույթի Մասնակցին և Պատվիրատուին այդ պայմանները քննարկելու և դրանք փոփոխելու իր իրավունքից՝ նախապայմանագրային բանակցությունների ընթացքում՝ այդ պայմանները փոփոխելու համաձայնություն ձեռք բերելու համար::

6.3. Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկը (ձև 3)

6.3.1. Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկի ձևը

ձևի սկիզբ

«----» ----------թվականի

թիվ ----------

Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկ

Մրցույթի Մասնակցի հասցեն և անվանումը՝ _____

№ п/п	Անվանումը Наименование	Տեղեկություններ մրցույթի Մասնակցի մասին (լրացվում է մրցույթի Մասնակցի կողմից)
1.	Մրցույթի Մասնակցի կազմակերպաիրավական ձևը և ֆիրմային անվանումը	
2.	Հիմնադիրները (թվարկել բոլոր այն հիմ-նադիրների անվանումները և կազմա-կերպաիրավական ձևերը կամ Ա.Ա.Հ., ում բաժինը կանոնադրական կապիտալում գերազանցում է 10%)	

3. Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման վկայական (ամսաթիվը և համարը, ում կողմից է տրված)

4. Մրցույթի մասնակցի ՀՎՀՀ

5. Իրավաբանական հասցեն

6. Փոստային հասցեն

7. Մասնաճյուղեր՝ թվարկել անվանումները և փոստային հասցեները

8. Բանկային վավերապայմաններ (բանկի անվանումը և հասցեն, մրցույթի Մասնակցի հաշվարկային հաշվի համարը բանկում, բանկի հեռախոսները, այլ բանկային վավերապայմաններ)

9. Մրցույթի Մասնակցի հեռախոսները (նշելով քաղաքի կոդը)

10. Մրցույթի Մասնակցի ֆաքսը (նշելով քաղաքի կոդը)

11. Մրցույթի Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն

12. Մրցույթի մասնակցի ղեկավարի ազգանունը, անունը և հայրանունը, ով ստորագրելու իրավունք ունի՝ համաձայն մրցույթի Մասնակցի հիմնադիր փաստաթղթերի՝ նշելով պաշտոնը և կոնտակտային հեռախոսը

13.	Մրցույթի Մասնակցի պատասխանատու անձի ազգանունը, անունը և հայրանունը՝ նշելով պաշտոնը և կոնտակտային հեռախոսը

_____

(Կ.Տ. ստորագրություն)

_____

(ստորագրողի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

6.3.2 Լրացման հրահանգներ

6.3.2.1. Մրցույթի Մասնակիցը նշում է մրցութային հայտի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներկայացման մասին նամակին համապատասխան (ենթաբաժին 5.1.):

6.3.2.2. Մրցույթի Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում կազմակերպաիրավական ձևը) և իր հասցեն:

6.3.2.3. Մրցույթի մասնակիցները պետք է վերոհիշյալ աղյուսակը լրացնեն բոլոր կետերով: Որևէ տվյալի բացակայության դեպքում նշել «չկա» բառը:

6.3.2.4. «Բանկային վավերապայմաններ» 8 սյունյակում նշվում են այն վավերապայմանները, որոնք կօգտագործվեն Պայմանագրի կնքման դեպքում:

6.4.Համանման պայմանագրերի կատարման ծավալների և ցանկի մասին տեղեկանք (ձև 4)

6.4.1. Համանման պայմանագրերի կատարման տարեկան ծավալների և ցանկի մասին տեղեկանքի ձև

ձևի սկիզբ

«----» ----------թվականի

թիվ ----------

Համանման պայմանագրերի կատարման ծավալների և ցանկի մասին տեղեկանք

Մրցույթի Մասնակցի հասցեն և անվանումը՝

_____

№ п/п	Կատարման ժամկետները (կատարման սկզբի տարին և ամիսը – կատարման փաստացի կամ նախատեսվող ավարտի տարին և ամիսը, չավարտված պայմանագրերի համար՝ կատարման տոկոսը)	Պատվիրատուն (անվանումը, հասցեն, կոնտակտային անձ՝ պաշտոնի նշումով, կոնտակտային հեռախոսներ)	Պայմանագրի նկարագրումը (մատակարարումների կազմը և ծավալը, պայմանագրի հիմնական պայմանների նկարագրումը)	Պայմանագրի գումարը, դրամ,	Տեղեկություն ներթվարկված պայմանագրերի պահանջների մասին
1.					
2.					
3.					
…					
Ընդամենը ամբողջ 2016 տարվա համար					**X**
1.					
2.					
3.					
…					
Ընդամենը ամբողջ 2017 տարվա համար					**X**
1.					
2.					
3.					
…					
Ընդամենը ամբողջ 2018 տարվա համար					**x**

_____

(Կ.Տ. ստորագրություն)

_____

(ստորագրողի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

6.5.2. Լրացման հրահանգներ

6.5.2.1.Մրցույթի Մասնակիցը նշում է մրցութային հայտի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներկայացման մասին նամակին համապատասխան (ենթաբաժին 5.1.):

6.5.2.2.Մրցույթի Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում կազմակերպահիրավական ձևը) և իր հասցեն:

6.5.2.3.Այս ձևում մրցույթի Մասնակիցը նշում է ծավալներով, կատարման ժամկետներով և 2 և 3 բաժինների այլ պահանջներով համադրելի համանման պայմանագրերի կատարման տարեկան ծավալները և ցանկը:

6.5.2.4. Մրցույթի Մասնակիցը կարող է ինքնուրույն ընտրել այն պայմանագրերը, որոնք, իր կարծիքով, լավագույն կերպով բնութագրում են իր փորձը:

6.5.2.5.Մրցույթի մասնակիցը կարող է ներառել նաև չավարտված պայմանագրեր՝ տվյալ փաստը անպայմանորեն նշելով:

2019թ.

ԳՆԱՀԱՇՎԱՐԿ

Հրազդան ՀԷԿ-ի թիվ 1 հիդրոագրեգատի յուղա և օդահովացուցիչների նորոգման աշխատանքներ

Ремонт масло-и-воздухоосушителей агрегата №1 Разданской ГЭС

N	Աշխատանքների անվանում	Գների հիմն.	չափ. միավ.	Քանակ	միավ. արժեք	միավ. արժեք դրամ
1	2	3	4	5	6	7
1	Նախապատրաստական աշխատ.(գործիքների, սարքերի, նյութերի, տեսակավորում փորձարկում, տեղափոխում նորոգման հարթակ, նորոգման ենթակա հանգույցների զննում, արատանշում համապատասխան աշխատատեղերի հարթակների նախապատրաստում, կարգավորում, հանձնում պատվիրատուին) Подготовительные работы (отбор, испытание, переброска на ремонтную площадку инструментов, приспособлений, материалов, обследование подлежащих ремонту узлов, испытание и проверка такелажных механизмов,подготовка соответствующих ремонтных площадок, чистка рабочей зоны, сдача отремонтированных узлов)	Ըստ հաշվարկի Расчет	մ/ժ	50		
2	Նորոգման աշխատանքների տեխնիկական ղեկավարում (հանգույցների ուսումնասիրում աշխատանքային ծավալների ճշտում, բանվորական բրիգադների կազմում, հրահանգավորում, անհրաժեշտ չափումների կատարում աշխատանքի որակի հսկում) Техническое руководство ремонтными работами (изучение узлов, уточнение объема , производство замеров, контроль за качеством)	Ըստ հաշվարկի Расчет	մ/ժամ	40		
3	Ագրեգատի օդահովացուցիչների նորոգում հանելով ու տեղադրելով հաշվի առնելով գործակիցներ՝ 2,0- հերթական 4 հովացուցիչների համար, 1,1- փակ միջավայրում աշխատելու համար Ремонт воздухоохладителей агрегата со снятием и установкой, учитывая коэффициент 2,0 - последующих 4 охладителя, 1,1 - работа в закрытых помещениях	Մաս /ЧастьV 0201022302	հատ	4		
4	Կրնկակալի յուղահովացուցիչների նորոգում առանց խողովակների փոխարինման հաշվի առնելով գործակիցներ 1,15- ամբարձիչի բացակայության և 1,1- աշխատանքները կատարվում են փակ միջավայրում Ремонт маслоохладителей пяты без замены трубок с учетом коэффициентов 1,15 - из-за отсутствия крана, 1,1 - работа в закрытых помещениях	Մաս/Часть II 0113030101	հատ	2		
5	ՈՒղղորդ առանցքակալների յուղահովացուցիչների նորոգում մինչև 30% խողովակների փոխարինումով հաշվի առնելով գործակիցներ՝ 1,15- ամբարձիչի բացակայության և 1,1- աշխատանքները կատարվում են փակ միջավայրում Для направляющих подшипников до 30% заменой труб с учетом коэффициентов 1,15 - из-за отсутствия крана, 1,1 - работа в закрытых помещениях	Մաս/Часть II 0113030102	հատ	2		
6	Քանդման, հավաքման աշխատանքներ առանց ռոտորը հանելու հանգույցների նդետալների տեխնիկական ստուգում Технический осмотр узлов и деталей сноса, сборки и снятия ротора	Մաս/Часть V 0201010201	հատ	1		
7	Օդահովացուցիչների և յուղահովացուցիչների հավաքում ստենդի վրա, փորձարկում, արատների վերացում և քանդում Сборка охладителей на стенде, испытание, ликвидация дефектов, разработка	Մաս/Часть I 0803010504	տն	4,1		
8	Ագրեգատի տեխնիկական ջրի ջրագծերի և յուղագծերի 60-ից 89մմ տրամագծով կցաշուրթային միացումների միջադիրների փոխարինում Замена прокладок во фланцевых соединениях 60-89 мм,	Մաս/Часть I 0504060102	հատ	22		
9	Ագրեգատի տեխնիկական ջրի ջրագծերի և յուղագծերի 89-ից 108մմ տրամագծով կցաշուրթային միացումների միջադիրների փոխարինում Замена прокладок во фланцевых соединениях 89-108 мм,	Մաս/Часть I 0504060103	հատ	16		
10	Աշխատանքների կատարման ընթացքում դետալների պատրաստում գործարանային պայմաններում Изгатовление деталей в заводских уловиях во время работы	Ըստ հաշվարկի Расчет	մ/ժ	340		

11	Ագրեգատի տեխնիկական ջրի ջրագծերի և յուղագծերի 219-ից 325մմ տրամագծով կցաշուրթային միացումների միջադիրների փոխարի-նում Замена прокладок во фланцевых соединениях 219-325 мм,	Մաս/Часть I 0504060107	հատ	24		
12	Ամրակապման տարրերի պարուրակային մասերի արտապարուրա-կում Прогонка резьбы крепежных элементов	Մաս/Часть VII 1102010202	հատ	85		
13	Հիդրավլիկ փորձարկման ընթացքում կցաշուրթերի վրա խցա-փակիչների տեղակայում և հանում Установка и снятие заглушек при гидравлическом испытании	Մաս I 1701090103	հատ	120		
14	Կցաշուրթերի միացումների արատավոր զամասեղների փոխա-րինում Замена дефектных шпилек фланцевых соединений	Մաս/Часть III 0305010101	հատ	78		
15	Տեխնիկական ջրի ջրագծերի կոշտ սեպով անջատող Ду=150մմ սողնակների նորոգում Ремонт запорной арматуры: задвижки с жестким клином Ду-80 масло и-воздухоохладителей агрегата	Մաս/Часть III 0105010201	հատ	5		
16	Աշխատանքների ընթացքում կատարվող եռակցման աշխատանք-ները / գործիքների, սարքերի նորոգում, ժամանակավոր հենարան-ների ու կախոցների տեղադրում, օդի և ջրի խողովակների անցկացում Выполняемые во время работы сварочные работы (ремонт инструмента и приспособлений, устройство временных опор и подвесок, подводка воды и воздуха)	Մաս/Часть I 0504020204	հատ	23		
17	Յուղահովացուցիչների հովացման խողովակագծերի քանդում, հանում, մաքրում, փորձարկում Разборка, снятие, очистка, испытание трубопроводов маслоохладителей	Մաս/Часть I 0503010101	տն	0,4		
18	Եզրափակիչ աշխատանքներ/ նորոգված հանգույցների փորձարկում, կարգավորում, աշխատատեղերի մաքրում, սարքերի գործիքների, ժամանակավոր հարթակների հավաքում Заключительные работы	Ըստ հաշվարկի расчет	մ/ժ	20,0		

ԸՆԴԱՄԵՆԸ:

2019թ.

ԳՆԱՀԱՇՎԱՐԿ

Հրազդան ՀԷԿ-ի թիվ 2 հիդրոագրեգատի յուղա և օդահովացուցիչների նորոգման աշխատանքներ

Ремонт масло-и-воздухоосушителей агрегата №2 Разданской ГЭС

N	Աշխատանքների անվանում	Գների հիմն.	չափ. միավ.	Քա-նակ	միավ. արժեք	միավ. արժեք դրամ
1	2	3	4	5	6	7
1	Նախապատրաստական աշխատ.(գործիքների, սարքերի, նյութերի, տեսակավորում փորձարկում, տեղափոխում նորոգման հարթակ, նորոգման ենթակա հանգույցների զննում, արատանշում համապատասխան աշխատատեղերի հարթակների նախապատ-րաստում, կարգավորում, հանձնում պատվիրատուին) Подготовительные работы (отбор, испытание, переброска на ремонтную площадку инструментов, приспособлений, материалов, обследование подлежащих ремонту узлов, испытание и проверка такелажных механизмов,подготовка соответствующих ремонтных площадок, чистка рабочей зоны, сдача отремонтированных узлов)	Ըստ հաշվարկի Расчет	մ/ժ	50		
2	Նորոգման աշխատանքների տեխնիկական ղեկավարում (հանգույցների ուսումնասիրում աշխատանքային ծավալների ճշտում, բանվորական բրիգադների կազմում, հրահանգավորում, անհրաժեշտ չափումների	Ըստ				

	կատարում աշխատանքի որակի հսկում) Техническое руководство ремонтными работами (изучение узлов, уточнение объема , производство замеров, контроль за качеством)	հաշվարկի Расчет	մ/ժամ	40		
3	Ագրեգատի օդահովացուցիչների նորոգում հանելով ու տեղադրելով հաշվի առնելով գործակիցներ՝ 2,0- հերթական 4 հովացուցիչների համար, 1,1- փակ միջավայրում աշխատելու համար Ремонт воздухоохладителей агрегата со снятием и установкой, учитывая коэффициент 2,0 - последующих 4 охладителя, 1,1 - работа в закрытых помещениях	Մաս /ЧастьV 0201022302	հատ	4		
4	Կրնկակալի յուղահովացուցիչների նորոգում առանց խողովակների փոխարինման հաշվի առնելով գործակիցներ 1,15- ամբարձիչի բացակայության և 1,1- աշխատանքները կատարվում են փակ միջավայրում Ремонт маслоохладителей пяты без замены трубок с учетом коэффициентов 1,15 - из-за отсутствия крана, 1,1 - работа в закрытых помещениях	Մաս/Часть II 0113030101	հատ	2		
5	ՈՒղղորդ առանցքակալների յուղահովացուցիչների նորոգում մինչև 30% խողովակների փոխարինումով հաշվի առնելով գործակիցներ՝ 1,15- ամբարձիչի բացակայության և 1,1- աշխատանքները կատարվում են փակ միջավայրում Для направляющих подшипников до 30% заменой труб с учетом коэффициентов 1,15 - из-за отсутствия крана, 1,1 - работа в закрытых помещениях	Մաս/Часть II 0113030102	հատ	2		
6	Քանդման, հավաքման աշխատանքներ առանց ռոտորը հանելու հանգույցների նդետալների տեխնիկական ստուգում Технический осмотр узлов и деталей сноса, сборки и снятия ротора	Մաս/Часть V 0201010201	հատ	1		
7	Օդահովացուցիչների և յուղահովացուցիչների հավաքում ստենդի վրա, փորձարկում, արատների վերացում և քանդում Сборка охладителей на стенде, испытание, ликвидация дефектов, разработка	Մաս/Часть I 0803010504	տն	4,1		
8	Ագրեգատի տեխնիկական ջրի ջրագծերի և յուղագծերի 60-ից 89մմ տրամագծով կցաշուրթային միացումների միջադիրների փոխարի-նում Замена прокладок во фланцевых соединениях 60-89 мм,	Մաս/Часть I 0504060102	հատ	22		
9	Ագրեգատի տեխնիկական ջրի ջրագծերի և յուղագծերի 89-ից 108մմ տրամագծով կցաշուրթային միացումների միջադիրների փոխարի-նում Замена прокладок во фланцевых соединениях 89-108 мм,	Մաս/Часть I 0504060103	հատ	16		
10	Աշխատանքների կատարման ընթացքում դետալների պատրաստում գործարանային պայմաններում Изготовление деталей в заводских уловиях во время работы	Ըստ հաշվարկի Расчет	մ/ժ	340		
11	Ագրեգատի տեխնիկական ջրի ջրագծերի և յուղագծերի 219-ից 325մմ տրամագծով կցաշուրթային միացումների միջադիրների փոխարի-նում Замена прокладок во фланцевых соединениях 219-325 мм,	Մաս/Часть I 0504060107	հատ	24		
12	Ամրակապման տարրերի պարուրակային մասերի արտապարուրա-կում Прогонка резьбы крепежных элементов	Մաս/Часть VII 1102010202	հատ	85		
13	Հիդրավլիկ փորձարկման ընթացքում կցաշուրթերի վրա խցա-փակիչների տեղակայում և հանում Установка и снятие заглушек при гидравлическом испытании	Մաս I 1701090103	հատ	120		
14	Կցաշուրթերի միացումների արատավոր գամասեղների փոխա-րինում Замена дефектных шпилек фланцевых соединений	Մաս/Часть III 0305010101	հատ	78		
15	Տեխնիկական ջրի ջրագծերի կոշտ սեպով անջատող Ду=150մմ սողնակների նորոգում Ремонт запорной арматуры: задвижки с жестким клином Ду-80 масло и-воздухоохладителей агрегата	Մաս/Часть III 0105010201	հատ	5		
16	Աշխատանքների ընթացքում կատարվող եռակցման աշխատանք-					

	ները / գործիքների, սարքերի նորոգում, ժամանակավոր հենարան- ների ու կախոցների տեղադրում, օդի և ջրի խողովակների անցկացում Выполняемые во время работы сварочные работы (ремонт инструмента и приспособлений, устройство временных опор и подвесок, подводка воды и воздуха)	Մաս/Часть I 0504020204	հատ	23		
17	Յուղահովացուցիչների հովացման խողովակագծերի քանդում, հանում, մաքրում, փորձարկում Разборка, снятие, очистка, испытание трубопроводов маслоохладителей	Մաս/Часть I 0503010101	տն	0,4		
18	Եզրափակիչ աշխատանքներ/ նորոգված հանգույցների փորձարկում, կարգավորում, աշխատատեղերի մաքրում, սարքերի գործիքների, ժամանակավոր հարթակների հավաքում Заключительные работы	Ըստ հաշվարկի расчет	մ/ժ	20,0		

ԸՆԴԱՄԵՆԸ: